

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 38/8

01-ը հունիսի 2019 թվականի

Ֆինանսներ (041201.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Ֆինանսներ (041201.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելվածի:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Տնտեսագիտության ֆակուլտետ

**«ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍՆԱԳԻՐ**

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Ֆինանսներ 041201.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	տնտեսագիտության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2018/19
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա և հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա ՀՀ եռաստիճան միջնակարգ ընդհանուր կամ դրան համարժեք այլ կրթություն /նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական/: Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

Այլ մասնագիտությամբ բակալավրի կամ համարժեք որակավորում ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննությունների: Այս դեպքում դիմորդը միանգամից ընդունվում է կրթական ծրագրի երկրորդ կուրս:

9. Ծրագրի նպատակները և խնդիրները

• Ծրագրի նպատակն է պատրաստել տնտեսագիտության, ֆինանսաբանկային, հաշվառման հիմնարար գիտելիքներ և հմտություններ ունեցող, ֆինանսական վերլուծություններ իրականացնող տնտեսագետ-մասնագետներ տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, առավելապես ֆինանսա բանկային ոլորտի, ինչպես նաև արտադրական, պետական կառավարման համակարգերի տարբեր օղակների համար: Նպաստել տնտեսագիտական մտածողության ձևավորմանը:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

- ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները,
- բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը,
- ներկայացնելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները,
- ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը,
- մեկնաբանելու ոչ բանկային ֆինանսական ոլորտին բնորոշ առանձնահատկությունները,
- բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,
- բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները,
- մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,
- մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ

օգտագործվող հիմնական հասկացությունները: Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. 1. դասակարգելու ռիսկերը և կայացնելու ֆինանսական որոշումներ, 2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, 3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, 4. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, 5. գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, 6. մշակելու և գործնականում իրականացնելու բանկային հատվածի վարկային և ակտիվային այլ գործառնությունները, 7. կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատել STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, 8. պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. 1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տնտեսագիտական տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, 3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ, 4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքներ, վարելու գիտական բանավեճեր, 5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, 6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու, 7. ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:
--

11. Ծրագրի ուսումնական պլանը
Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը
Կցված է
13. Գնահատման ձևերը
▪ ստուգարքներ, ▪ ընթացիկ քննություններ, ▪ կուրսային աշխատանքների կատարում, ▪ եզրափակիչ քննություններ, ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները
«Ֆինանսներ» ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական բազա այն ուսանողների համար, ովքեր մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, բանկային հատվածի, կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հանրային կառավարման ոլորտներում: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկություններում, առևտրային բանկերում, խորհրդատվական ընկերություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. <i>Կրթական համակարգեր</i> ▪ ֆինանսների, բանկային մենեջմենթի, հաշվապահական հաշվառման դասախոս, <i>Խորհրդատվական ընկերություններ</i> ▪ ֆինանսական խորհրդատու, ▪ վիճակագրական տվյալների վերլուծաբան. <i>Ձեռնարկություններ</i>

- ֆինանսական վերլուծաբան,
- տնտեսագետ,
- հաշվապահ,

Առևտրային բանկեր

- վարկային մասնագետ,
- ռիսկերի կառավարման մասնագետ,
- հաշվապահ,
- ակտիվների և պասիվների կառավարման մասնագետ,

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ

- ֆինանսիստ,
- հաշվապահ
- տնտեսագետ,
- վիճակագրական տվյալների վերլուծաբան
- տնտեսական քաղաքականության ծրագրերի մշակման խմբի անդամ,
- տնտեսական նախագծերի մշակման, դրանց արդյունավետության գնահատման և իրականացման վերահսկողության գծով մասնագետ:

Հնարավոր աշխատավայրերն են՝ ՀՀ նախարարությունները, կենտրոնական բանկը, բուհերը, առևտրային բանկերը, ապահովագրական կազմակերպությունները, մասնավոր կազմակերպությունները:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- Ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված լսարաններ,
- արցանց դասախոսություններ,
- էլեկտրոնային ռեսուրսներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ
 - հայաստանյան և այլ բուհերի համապատասխան կրթական ծրագրերի բենչմարքինգ.
 - ԵՊՀ Ֆինանսներ (ըստ ոլորտի) կրթական ծրագիր,
 - ՀՊՏՀ Ֆինանսներ կրթական ծրագիր,
 - Обязательные компетенции ФГОС ВПО бакалавров по направлению “Экономика” Российской Федерации.
 - Каталог учебных программ экономического факультета МГУ программы бакалавров по направлению “Экономика”.
 - Middlex University. Programme Specification and Curriculum Map for BSc Honours Business Economics 2009-2010;
- The framework of qualifications for the European Higher Education Area, 2010:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Ֆինանսներ ԿԾ-ի նպատակների հաջող իրականացման համար ֆակուլտետում առկա են անհրաժեշտ համակարգչային ծրագրերը /ՀԾ-հաշվապահ, STATA, Eviews /:

«ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ
ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները:	Բ1	Դասակարգելու ռիսկերը և կայացնելու ֆինանսական որոշումներ:
Ա2	Բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը:	Բ2	Պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվել նորմատիվաիրավական փաստաթղթերից:
Ա3	Ներկայացնելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները:	Բ3	Գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը:
Ա4	Ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը:	Բ4	Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:
Ա5	Մեկնաբանելու ոչ բանկային ֆինանսական ոլորտին բնորոշ առանձնահատկությունները:	Բ5	գնահատել ընտրված տնտեսական քաղաքականությունները
Ա6	Բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը:	Բ6	Մշակելու և գործնականում իրականացնելու բանկային հատվածի վարկային և ակտիվային այլ գործառույթները:
		Բ7	Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/:
Ա8	Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները:	Բ8	Պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ:
Ա9	Մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ);	Գ4	Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
Գ2	Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:	Գ5	Գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը:
Գ3	Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական	Գ6	Աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ

	հանրության հետ:		կիրառելու գիտելքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
		Գ7	Ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվա- նիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																									
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Բ8	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7		
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B01																				+			+			
Հայոց պատմության հիմնահարցեր-1	0304/B02																						+	+			
Ֆիզդաստիարակություն	0001/B03																						+	+			
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B04																			+			+	+			
Ռուսերեն-1	0305/B05																				+			+			
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	0001/B06																			+			+	+			
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B07						+															+					
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B08																				+	+	+				
Հայոց պատմության հիմնահարցեր-2	0304/B09																			+			+	+			
Ֆիզդաստիարակություն	0001/B10																										
Ռուսերեն-2	0305/B11																				+	+					
Ֆիզդաստիարակություն	0001/B12																						+	+			
Փիլիսոփայության հիմունքներ	0304/B13																			+			+		+		
Ֆիզդաստիարակություն	0001/B14																										
Իրավունքի հիմունքներ	0304/B15											+								+			+				
Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	0104/B16		+				+										+			+							
Անգլերեն-1	0305/B17																				+			+			
Ֆրանսերեն-1	0305/B17																				+			+			
Անգլերեն-2	0305/B18																				+	+					
Ֆրանսերեն-2	0305/B18																				+	+					
Բարոյագիտության հիմունքներ	0303/B19																					+	+		+		
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B19																			+		+	+				
Գործարարության հիմունքներ	0201/B19							+				+												+			

Կրոնագիտության հիմունքներ	0304/B19																							+	+	
Հոգեբանության հիմունքներ	0303/B19																							+		+
Մշակութաբանության հիմունքներ	0202/B19																			+				+		
Տրամաբանության հիմունքներ	0304/B19																				+		+			+
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B19																				+			+		+
Մաթեմատիկական անալիզ-1	0105/B20										+			+				+			+				+	
Տնտեսագիտական տեսություն-1	0201/B21							+	+						+				+						+	
Մաթեմատիկական անալիզ -2	0105/B22		+										+				+				+		+			
Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ	0105/B23							+									+			+					+	
Տնտեսագիտական ինֆորմատիկա	0104/B24							+									+		+							
Տնտեսագիտական տեսություն-2	0201/B25								+	+								+							+	
Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	0104/B26							+									+			+						
Ֆինանսական հաշվարկների հիմունքներ	0201/B27							+								+			+				+			
Հավանականությունների տեսություն	0105/B28		+																	+					+	
Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ	0201/B29	+					+				+		+		+				+				+			
Տնտեսական իրավիճակների մոդելավորում	0201/B30							+	+								+			+					+	
Տնտեսագիտական մտքի պատմություն	0201/B31								+	+					+				+	+						
Վիճակագրություն	0201/B32		+								+		+					+					+			
Համակարգչային պրակտիկում	0104/B33																+	+	+				+		+	
Պետական ֆինանսներ	0201/B34								+			+		+	+			+	+	+						
Էկոնոմետրիկա-1	0201/B35							+					+	+			+			+						
Տնտեսական սոցիոլոգիա	0201/B36							+							+				+						+	
Միջազգային տնտեսագիտություն	0201/B37							+	+					+	+					+				+		
Միկրոտնտեսագիտություն	0201/B38								+						+		+			+					+	
Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա	0201/B39	+						+	+		+	+							+						+	
Էկոնոմետրիկա-2	0201/B40							+					+				+			+						
Հաշվապահական հաշվառում-1	0201/B41					+				+		+							+						+	
Կորպորատիվ ֆինանսների հիմունքներ	0201/B42	+								+			+				+			+						
Ձեռնարկության էկոնոմիկա	0201/B43							+				+	+							+			+			
Մակրոտնտեսագիտություն	0201/B44								+			+			+					+	+					

Հաշվապահական հաշվառում-2	0201/B45				+					+							+	+			+				
Բանկային գործ	0201/B46			+				+			+	+				+					+				
Հարկային համակարգ	0201/B47							+				+			+			+		+					
Մենեջմենթ	0201/B48	+						+					+						+						
Ռիսկերի կառավարում և ապահովագրություն	0201/B49	+									+	+												+	
Մաքսային գործ	0201/B50											+			+				+						
Ֆինանսների կառավարում	0201/B51	+											+	+						+					
Տնտեսական գործունեության վերլուծություն	0201/B52									+		+							+	+					
Բանկային գործունեության կարգավորում	0201/B53			+								+			+	+			+						
Գործավարություն օտար լեզվով /անգլերեն/	0201/B54											+						+	+		+			+	
Գործավարություն օտար լեզվով /ռուսերեն/	0201/B54											+						+	+		+			+	
Գործավարություն օտար լեզվով /ֆրանսերեն/	0201/B54											+						+	+		+			+	
Կառավարչական հաշվառում	0201/B55							+										+		+					
Ֆինանսական իրավունք	0201/B55											+	+	+	+										
Բիզնեսի կազմակերպում	0201/B56																	+	+						+
Մարդկային ռեսուրսների և աշխատանքի էկոնոմիկա	0201/B56								+	+					+					+					+
Բանկային նոր տեխնոլոգիաներ	0201/B57			+			+				+													+	
Միջազգային բիզնես	0201/B57	+						+			+				+					+					
Աուդիտի հիմունքներ	0201/B58				+			+			+		+				+	+		+					
Վարկային գործառնություններ	0201/B58	+		+		+									+		+		+	+					
Մարքեթինգի հիմունքներ	0201/B59							+	+			+			+							+		+	
Ներդրումային հիմնադրամներ	0201/B59					+	+				+			+	+				+			+			
Հաշվապահական ծրագրեր	0201/B60				+		+										+	+						+	
Ոչ Բանկային ֆինանսական համակարգեր	0201/B60	+				+					+			+						+				+	
Կուրսային աշխատանք-1	0201/B61											+							+	+		+			
Կուրսային աշխատանք-2	0201/B62											+							+	+		+			
Մասնագիտական պրակտիկա	0201/B63													+			+	+			+			+	+
Ավարտական աշխատանք	0201/B64											+							+	+			+		+

«ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Թվանիշ	Ուսումնական մոդուլի անվանումը	Կրեդիտներ	Ուսումնական բեռնվածությունը,					Կիսամյակներ																Գնահատման ձևը
			Ժամ					1		2		3		4		5		6		7		8		
			Ընդ.	Դսվ.	Գրծ./սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒԾԱՄԱՍ	44	1320	255	405	0	660	20	22	12	14	8	10	4	6									
	Պարտադիր դասընթացներ	40	1200	195	405	0	600	20	22	12	14	4	6	4	6									
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	0	30	0	30	2	2															Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60	30	0	0	30	2	2															Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/-1	4	120	0	60	0	60	4	4															Ստ.
	Ռուսերեն-1	4	120	0	60	0	60	4	4															Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	60	0	30	0	30	2	2															Ստ.
	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	4	120	30	30	0	60	4	4															Ստ.
	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	30	0	0	30	2	2															Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	0	30	0	30			2	2													Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60	30	0	0	30			2	2													Ստ.
	Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/-2	4	120	0	60	0	60			4	4													Ստ.
	Ռուսերեն-2	4	120	0	60	0	60			4	4													Ստ.
	Փիլիսոփայության հիմունքներ	4	120	30	30	0	60					4	4											Ստ.
	Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	2	60	15	15	0	30							2	2									Ստ.
	Իրավունքի հիմունքներ	2	60	30	0	0	30							2	2									Ստ.
	Ֆիզդաստիարակություն	0							2		2		2		2									Ստ.
	Կամրնտրական դասընթացներ	4	120	60	0	0	60					4	4											Ստ
	Քաղաքագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											
	Մշակութաբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											
	Կրոնագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											

Բարոյագիտության հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											
Սոցիոլոգիայի հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											
Տրամաբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											
Հոգեբանության հիմունքներ	2	60	30	0	0	30					2	2											
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	60	30	0	0	30					2	2											
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	166	4980	1290	1140	0	2550	12	12	18	18	22	22	28	26	28	28	28	28	30	28	0	0	
Պարտադիր դասընթացներ	150	4500	1140	1050	0	2310	12	12	18	18	18	18	28	26	24	24	24	24	26	24	0	0	
Տնտեսագիտության տեսություն-1	6	180	45	45	0	90	6	6															Եզ.Գն.
Մաթեմատիկական անալիզ-1	6	180	45	45	0	90	6	6															Եզ.Գն.
Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ	5	150	45	30	0	75			5	5													Եզ.Գն.
Տնտեսագիտական ինֆորմատիկա	2	60	15	15	0	30			2	2													Առ.Եզ.Գն.
Տնտեսագիտության տեսություն-2	6	180	45	45	0	90			6	6													Եզ.Գն.
Մաթեմատիկական անալիզ-2	5	150	45	30	0	75			5	5													Եզ.Գն.
Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	6	180	45	45	0	90					6	6											Եզ.Գն.
Հավանականությունների տեսություն	4	120	30	30	0	60					4	4											Եզ.Գն.
Ֆինանսական հաշվարկների հիմունքներ	4	120	30	30	0	60					4	4											Առ.Եզ.Գն.
Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ	4	120	30	30	0	60					4	4											Եզ.Գն.
Տնտեսական իրավիճակների մոդելավորում	4	120	30	30	0	60							4	4									Եզ.Գն.
Տնտեսագիտական մտքի պատմություն	4	120	30	30	0	60							4	4									Առ.Ընթ.Գն.
Վիճակագրություն	5	150	45	30	0	75							5	5									Եզ.Գն.
Համակարգչային պրակտիկում	2	60	0	30	0	30							2	2									Առ.Եզ.Գն.
Պետական ֆինանսներ	5	150	30	30	0	90							5	4									Եզ.Գն.
Էկոնոմետրիկա-1	4	120	30	30	0	60							4	4									Առ.Եզ.Գն.
Տնտեսական սոցիոլոգիա	4	120	30	15	0	75							4	3									Առ.Ընթ.Գն.
Միջազգային տնտեսագիտություն	4	120	30	30	0	60									4	4							Եզ.Գն.

Միկրոտնտեսագիտություն	5	150	45	30	0	75									5	5							Եզ. Գն.
Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա	3	90	30	15	0	45									3	3							Առ.Ընթ.Գն.
Էկոնոմետրիկա-2	4	120	30	30	0	60									4	4							Եզ. Գն.
Հաշվապահական հաշվառում-1	4	120	30	30	0	60									4	4							Առ.Եզ. Գն.
Կորպորատիվ ֆինանսների հիմունքներ	4	120	30	30	0	60									4	4							Առ.Եզ. Գն.
Ձեռնարկության էկոնոմիկա	4	120	30	30	0	60											4	4					Եզ. Գն.
Մակրոտնտեսագիտություն	6	180	45	45	0	90											6	6					Եզ. Գն.
Հաշվապահական հաշվառում-2	4	120	30	30	0	60											4	4					Եզ. Գն.
Բանկային գործ	6	180	45	45	0	90											6	6					Եզ. Գն.
Հարկային համակարգ	4	120	30	30	0	60											4	4					Եզ. Գն.
Մենեջմենթ	5	150	45	30	0	75													5	5			Եզ. Գն.
Ռիսկերի կառավարում և ապահովագրություն	5	150	30	30	0	90													5	4			Եզ. Գն.
Մաքսային գործ	5	150	45	30	0	75													5	5			Առ.Ընթ.Գն.
Ֆինանսների կառավարում	4	120	30	30	0	60													4	4			Առ.Եզ. Գն.
Տնտեսական գործունեության վերլուծություն	2	60	15	15	0	30													2	2			Առ.Եզ. Գն.
Բանկային գործունեության կարգավորում	5	150	30	30	0	90													5	4			Եզ. Գն.
Կամրնտրական դասընթացներ	16	480	150	90	0	240	0	0	0	0	4	4	0	0	4	4	4	4	4	4	0	0	
Կամրնտրական դասընթացներ	4	120	0	60	0	60					4	4											Առ.Ընթ.Գն.
Գործավարություն օտար լեզվով /ռուսերեն/	4	120	0	60	0	60																	
Գործավարություն օտար լեզվով /անգլերեն/	4	120	0	60	0	60																	
Կամրնտրական դասընթացներ	2	60	0	30	0	30									2	2							Առ.Ընթ.Գն.
Կառավարչական հաշվառում		60	30	0		30																	
Ֆինանսական իրավունք		60	30	0		30																	
Կամրնտրական դասընթացներ	2	60	30	0	0	30									2	2							Առ.Ընթ.Գն.
Բիզնեսի կազմակերպում և կառավարում		60	30	0	0	30																	
Մարդկային ռեսուրսներ և		60	30	0	0	30																	

	աշխատանքի էկոնոմիկա																							
	Կամրնտրական դասընթացներ	2	60	30	0	0	30										2	2						Առ.Ընթ.ՊԳն.
	Բանկային նոր տեխնոլոգիաներ		60	30	0	0	30																	
	Միջազգային բիզնես		60	30	0	0	30																	
	Կամրնտրական դասընթացներ	2	60	30	0	0	30										2	2						Առ.Ընթ.ՊԳն.
	Առողիտի հիմունքներ		60	30	0	0	30																	
	Վարկային գործառնություններ		60	30	0	0	30																	
	Կամրնտրական դասընթացներ	2	60	30	0	0	30													2	2			Առ.Ընթ.ՊԳն.
	Մարքեթինգի հիմունքներ		60	30	0	0	30																	
	Ներդրումային հիմնադրամներ		60	30	0	0	30																	
	Կամրնտրական դասընթացներ	2	60	30	0	0	30													2	2			Առ.Ընթ.ՊԳն.
	Հաշվապահական ծրագրեր		60	30	0	0	30																	
	Ոչ բանկային ֆինանսական համակարգեր		60	30	0	0	30																	
	Կրթական այլ մոդուլներ	30													2				2			26		
	Կուրսային աշխատանք-1	2	60												2									Առ.Ընթ.ՊԳն.
	Կուրսային աշխատանք-2	2	60																2					Առ.Ընթ.ՊԳն.
	Մասնագիտական պրակտիկա	6	120																			6		Առ.Ընթ.ՊԳն.
	Ավարտական աշխատանք	20	600																			20		Առ.Ընթ.ՊԳն.
	ԸՆԴԱՄԵՆԸ	240	6300	1545	1545	0	3210	32	34	30	32	30	32	32	30	28	28	28	32	28	26	0		
	Ուսումնական/գիտական մոդուլների քանակը																							

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Տնտեսագիտության ֆակուլտետ

«Ֆինանսներ»

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0302/B01	Հայոց լեզու և խոսքի մշակույթ -1	2 կրեդիտ
2 ժամ/ շաբ.	0/30/0	
1-ին կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք: Դասընթացի խնդիրներն են. • ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, • ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը: 2. Ձևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն): 3. Սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք: 2. Գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 2. Աշխատելու թիմում:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • քննարկում /բանավեճ • համագործակցային աշխատանք • մտազրոհ • վերլուծական մեթոդ • խոսքային կամ բանավոր մեթոդ		

• գրավոր մեթոդ • բացատրական մեթոդ:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: Թեմա 2. Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: Թեմա 3. Բառային մակարդակ: Թեմա 4. Քերականական մակարդակ: Ձևաբանություն: Թեմա 5. Շարահյուսություն: Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա: Հիմնական գրականության ցանկ 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր, 2015: 3. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր, 2002: 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997: 7. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, 2003: 8. Մկրտչյան Ռ.Խ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճագիտություն, Եր, 1992: 9. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003: 10. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ա, Բ, Եր., 1990, 1991: 11. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Հնչյունաբանություն, բառագիտություն/ Եր., 1982:

0302/B08.	Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/30/0	
2-րդ կիսամյակ	Ստուգաբք	
Դասընթացի նպատակն է հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, զրազետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնել ուսումնական գործընթացներում: Դասընթացի խնդիրներն են. • բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու խոսքի արժանիքները: 2. Կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կառուցելու պատկերավոր և զրազետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, կունենա խոսքային բարձր եթիկետ:		

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջադրյունները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ, Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ5.գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • քննարկում /բանավեճ • համագործակցային աշխատանք • մտազրոհ • վերլուծական մեթոդ • խոսքային կամ բանավոր մեթոդ • գրավոր մեթոդ • բացատրական մեթոդ:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Խոսքի արժանիքները: Թեմա 2. Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Թեմա3. Խոսքի գործառական տարբերակներ /գիտական,պաշտոնական, խոսակցական: Թեմա 4. Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:		
Հիմնական գրականության ցանկ 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր.,2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր, 2015: 3. Ասատրյան Մ.Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002: 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն,Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997: 7. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, 2003: 8. Մկրտչյան Ռ.Խ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճա-գիտություն, Եր, 1992: 9. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարա-հյուսություն, Եր., 2003: 10. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ա, Բ, Եր., 1990,1991: 11. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Հնչյունաբանություն, բառագիտություն/, Եր.,1982:		

0304/Բ 02	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2 կրեդիտ
2 Ժամ/շաբ.	30/0/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության,համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Դասընթացի խնդիրներն են. • ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան, պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:		

• ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորոշություն, • ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը: 2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: 3. Ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանել Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: 2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում: 3. Արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան) 1. Տարբերակելու և գնահատել մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը ևս հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում: 2. Բանավիճելու:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • սեմինար, • ռեֆերատ, • անհատական և խմբային առաջադրանքներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբարձը անցեկացվում նախապես տրված հարցաշարի շրջանում /բանավոր հարցում/:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: Թեմա 2. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: Թեմա 3. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: Թեմա 4. Արշակունիների թագավորությունը: Թեմա 5. Հայաստանը վաղ միջնադարում: Թեմա 6. Հայաստանը զարգացած միջնադարում: Թեմա 7. Հայաստանը ուշ միջնադարում:		
Հիմնական գրականության ցանկ 1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:		

0304/B9	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	

2-րդ կիսամյակ	Ստուգաթղթ
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում: Դասընթացի խնդիրներն են. • ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին, • ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն, • ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:	
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը: 2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: 2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տարբերակելու և գնահատելու հայոց պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:	
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:	
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • սեմինար, • ռեֆերատ, • անհատական և խմբային առաջադրանքներ:	
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգաթղթը անցկացվում է բանավոր, նախապես տրված հարցաշարի շրջանակում:	
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: Թեմա 2. Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը:	

Թեմա 4. Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: Թեմա 5. Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 6. Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 7. Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: Թեմա 8. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Թեմա 9. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: Թեմա 10. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Թեմա 11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:
Հիմնական գրականության ցանկ 1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:

0105/B04	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30 /0/0	
1-ին կիսամյակ	ստուգաբք	
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախագծուշացնել լու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու Էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարհայացքի ինքնուրույն ընտրության: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ՝ Էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, Էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի Էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, Էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, Էկոլոգիական ճգնաժամերի, Էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող Էկոլոգիական օրենսդրության մասին, • ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, Էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները, • դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու Էկոլոգիայի հիմնական հասկացությունները, Էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները: 2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները: 3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին: 2. Նախագծուշական միջոցառումներ ներկայացնելու գերծ պահելու շրջակա միջավայրը Էկոլոգիական աղետներից: 3. Անցկացնելու մոնիթորինգ և գնահատելու տարածաշրջանի Էկոլոգիական իրավիճակը,		

համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն: 2. Հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով: 3. Տվյալ էկոհամակարգի վրա կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու նրա վրա այս կամ այն գործոնի ազդեցությունը:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • պասիվ դասխոսություն, • ակտիվ դասխոսություն, հարց ու պատասխան, զրույց, • ինտերակտիվ դասխոսություն՝ «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում, • հարց ու պատասխան, • բանավեճ, • զրույց:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի :
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուց-վածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: Թեմա 2. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: Թեմա 3. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: Թեմա 4. Էներգիայի և նյութերի հոսքը Էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը Էկոհամակարգերում, Էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: Թեմա 5. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: Թեմա 6. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: Թեմա 7. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Զուրը երկրի վրա և նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: Թեմա 8. Պոպուլյացիայի բնութագիրը: Ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը: պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: Թեմա 9. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Զրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

Հիմնական գրականության ցանկ

1. Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ., Ժամհարյան Հ.Գ., Խոյեցյան Ա.Վ., Մովսեսյան Հ.Ս., Փիրումյան Գ.Պ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, «Զանգակ-97», 2010, -224 էջ
2. Գրիգորյան Ա., Աղայան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008
3. Մելքումյան Լ.Ս., Գալստյան Մ.Հ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ.- Երևան, «Զանգակ-97», 2010.-312 էջ
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն.Կ., Էկոլոգիա, «Զանգակ-97», Երևան, 2002, -64 էջ
5. Валова В.Д., Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, «Дашков и К» 2005,-264с.

0305/B05	Ռուսերեն -1	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին կիսամյակ	Ստուգաք	

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:

Դասընթացի խնդիրներն են.

- ռուսաց գրական լեզվի նորմերի յուրացում,
- մասնագիտական բառապաշարի ձևավորում,
- մասնագիտական նյութի թարգմանություն:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը:
2. Ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար:
3. Կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին):
2. Հասկանալու և կարողանալ սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- քննարկում /բանավեճ,
- համագործակցային աշխատանք,
- էվրիստիկական մեթոդ,
- մտազրույց,
- ինդուկտիվ մեթոդ
- դեդուկտիվ մեթոդ,
- վերլուծական մեթոդ,
- խոսքային կամ բանավոր մեթոդ,
- գրավոր մեթոդ,
- բացատրական մեթոդ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ,

Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և

հնչերանգային հիմնական նորմերը: Թեմա 2. Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Թեմա 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Թեմա 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: Հիմնական գրականության ցանկ 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян, Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.
--

0305/B11	Ռուսերեն -2	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը: Դասընթացի խնդիրներն են. • ռուսերեն լեզվով մասնագիտական ոլորտներում հաղորդակցվելու հմտությունների ձևավորում, • մասնագիտական բառապաշարի զարգացում, • մասնագիտական գրականության և տարբեր նյութերի հետ աշխատելու հմտությունների զարգացում: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը: 2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով: 3. Գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով: 2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները: 3. Վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ: 4. Թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը: 5. Ձևանագանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Գնահատելու, վերլուծելու և գուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը: 2. Օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու		

տեղեկատվությունը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • քննարկում /բանավեճ/, • համագործակցային աշխատանք, • էվրիստիկական մեթոդ, • մտազրոհ, • ինդուկտիվ մեթոդ, • դեդուկտիվ մեթոդ, • վերլուծական մեթոդ, • խոսքային կամ բանավոր մեթոդ, • գրավոր մեթոդ, • բացատրական մեթոդ:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ Թեմա 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկու թյուններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թեմա 2. Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառա-կապակցություն, նախադասու թյանդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: Թեմա 3. Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: Թեմա 4. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգաբքն անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:		
Հիմնական գրականության ցանկը 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.		

0001/B06.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
1-ին կիսամյակ	Ստուգաբք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը, ինչպես նաև զարգացնել էքսրեմալ պայմաններում մինչբժշկական օգնության ցուցաբերման հմտությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Գերկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները: 2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին, 3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները: 4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը: 5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:
բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն: 2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում: 3. Գուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում: 4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում: 2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ: 3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5.գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • հարցադրումներ և քննարկումներ, • լաբորատոր աշխատանքներ, • տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Դասընթացն ավարտվում է ստուգաբաժնով, ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը գործնական:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Թեմա 2. Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: Թեմա 3. Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4. Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5. Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 6. Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7. Փրկարարական աշխատանքների կազմակերպումն արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: Թեմա 8. Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: Թեմա 9. Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: Թեմա 10. Սուր հիվանդություններ և թունավորումներ: Թեմա 11. Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: Թեմա 12. Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Հիմնական գրականության ցանկ

1. Եզորով Պ.Տ., Շլախով Ի.Ա., Մորդովինով Դ., Միմոնենկո Ի.Վ., Միպայլո Յու.Ա., Քաղաքացիական պաշտպանություն, Երևան, 1968թ.
2. Զայցև Ա.Պ., Կորժավին Ա.Վ., Կոնյև Ա.Ի., Քաղաքացիական պաշտպանություն, Հայաստան, 1984թ.
3. Առաջին օգնության հիմունքները:
4. Առաջին օգնության տարրերը: Հայկական կարմիր խաչի ընկերություն. մարդասիրության ուժը:
5. В. М. Буонов. «Первич. Медицинская помощь», «М», 1980
6. В. В. Ювенич «Первич. помощь при травмах». «М», 1984

0104/B07.	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/30/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին տալ ընդհանուր տեղեկություններ համակարգչի կառուցվածքի, համակարգային և կիրառական ծրագրերի վերաբերյալ, • բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտությունների մեջ, • դիտարկել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները, փաստաթղթի հրատարակումը տարբեր ձևաչափերով (օրինակ՝ HTML, PDF, XML), տեքստային խմբագրի կիրառումը համատեղ աշխատանքի ռեժիմում, տեքստային խմբագրի ինտեգրումն այլ թվայնացված միջոցների հետ, • ծանոթացնել Excel համակարգով խնդիրներ լուծելու, ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների գրաֆիկներ կառուցելու, տեսակավորելու հնարավորություններին, ինչպես նաև Power Point համակարգով ներկայացումներ ստեղծելուն:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները: 2. Ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար: 3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ: 4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները: 2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով: 3. Էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ: 4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,		

Գ4. պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • հարցադրումներ և քննարկումներ, • լաբորատոր աշխատանքներ, • տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը գնահատվում է «ստուգված», եթե կատարել է 50% և ավելի. • ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները • ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը • ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեստերից:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Թեմա 2. Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: Թեմա 3. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում: Թեմա 4. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ:
Հիմնական գրականության ցանկ 1. Հովակիմյան Ա., Սարգսյան Ս., Խաչոյան Լ. Համակարգչային գրագիտություն: - Մեթոդական ձեռնարկ, ԵՊՀ, Երևան, 2012 2. Вильямс,-Microsoft Excel,СПб, Питер-2008 3. Рабин Ч., Эффективная работа с Microsoft Word 2000. Питер, С.Петербург, 2008 4. Васильев А.А., Стоцкий Ю.А., Телина И.С., Microsoft Office 2010. Питер, 2011

0304/B13	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
3-րդ կիսամյակ	Ստուգաք	
Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար: Դասընթացի խնդիրներն են. • բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, • բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, • հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները, 2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները,		

3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից: 2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը: 3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տեղի և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ7. ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • սեմինար, • քննարկում, • զեկուցում, • ռեֆերատ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգաթքը, նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր :		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: Թեմա 2. Կեցություն և մատերիա: Թեմա 3. Դիալեկտիկա: Թեմա 4. Բնություն: Թեմա 5. Մարդ և պրակտիկա: Թեմա 6. Գիտակցությունն ճանաչողու թյուն: Թեմա 7. Գիտություն: Թեմա 8. Հասարակություն:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980: 2. Բրուստյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ1, Երևան, 1987: 3. Բրուստյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ2, Երևան, 1987: 4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1980: 5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004: 6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975:		

0304/B15	Իրավունքի հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգաթք	
Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ: Դասընթացի խնդիրներն են. • ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ, • ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:		

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները: 2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը: 3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ, 2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում: 3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ F2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվ իրավական փաստաթղթերից, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • ռեֆերատ, • զեկուցում:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքը նախապես տրված հարցաշարով անց է կացվում բանավոր:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: Թեմա 2. Սահմանադրական իրավունք: Թեմա 3. Քաղաքացիական իրավունք: Թեմա 4. Քրեական իրավունք: Թեմա 5. Աշխատանքային իրավունք: Թեմա 6. Ընտանեկան իրավունք: Թեմա 7. Տեղական ինքնակառավարում: Թեմա 8. Վարչական իրավունք: Թեմա 9. Դատավարական իրավունք: Թեմա 10. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: Թեմա 11. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: Թեմա 12. Միջազգային իրավունք:		
Հիմնական գրականության ցանկ 1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002: 2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003, 2006: 3. Բարսեղյան Ս., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000: 4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999: 5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001: 6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:		

0104/B16	Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	15/15/0	
4-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների և կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար:		

Դասընթացի խնդիրներն են. • ծանոթացում վիճակագրական հետազոտությունների փուլերին, • վիճակագրական հետազոտությունների գլխավոր օբյեկտների ուսումնասիրություն, • վիճակագրական տվյալների հավաքման, մշակման և ընդհանրացման ժամանակակից մեթոդների յուրացում:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ: 2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ: 2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա2. բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը, ժամանակակից մոտեցումները, Ա6. բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Բ7. կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր, • խմբային աշխատանքներ, • ռեֆերատներ, • անհատական աշխատանք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքը, նախապես տրված հարցաշարով, անց է կացվում բանավոր:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Նկարագրական վիճակագրություն: Թեմա 2. Նմուշային եղանակ: Թեմա 3. Գնահատման տեսություն: Թեմա4. Միջակայքային գնահատականներ:		
Հիմնական գրականության ցանկ 1. Գասպարյան Կ.Վ. Վիճակագրական խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017 2. Ն.Գ.Ահարոնյան, Ե.Լ.Իսրայելյան, Հավանականությունների տեսության խնդրագիրք, ԵՊՀ, 2016 3. Ե.Հարությունյան և այլք., Հավանականություն և կիրառա կան վիճակագրություն, 2000		

0305/B17	Անգլերեն-1	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման: Դասընթացի խնդիրներն են. • ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար.		

• զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը: 2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները: 3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները: 4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս: 2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը: 3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: 2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում: 3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • հաղորդակցական մեթոդ, • մտազրոհ, • ուսանողական պորտֆոլիո, • խմբային աշխատանք, • գրավոր և բանավոր թարգմանություն, • աշխատանք տեղեկագրով, • ռեֆերատ, • իքնուրույն աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբքն անցկացվում է մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/և վերջում ներկայացրած աշխատանքների առկայությամբ՝ գրավոր և բանավոր թարգմանություններ, ռեֆերատ, պրեզենտացիա, խմբային աշխատանք, ուսանողա կան պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: Թեմա2. Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: Թեմա3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Համաշխարհային տնտեսության հիմնա հարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:
Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitarian, Ye., Basic English for University Students, Yerevan: YSU Press, 2004. 2. Zatikyan, A.T. Economics and Business, Yerevan, 1992. 3. Gevorgyan G., Galstyan A., English Armenian. More Commonly Used Words and Combinations, Yerevan: Areg, 2005. 4. World Book, Encyclopedia, 2002.

0305/B18	Անգլերեն- 2	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում, Դասընթացի խնդիրներն են. - ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը, - հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները: - Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ: բ. գործնական մասնագիտական կարողություններ - Ընկալելու և վերարտադրելու կարողացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը: - Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան: - Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանու թյուններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում: - Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ: - Ներգրավելու ձեռքբերված գիտելիքները և կարողու թյունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով, որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - հաղորդակցական մեթոդ, - տագրոհ, - ուսանողական պորտֆոլիո, - խմբային աշխատանք, - հրավոր և բանավոր թարգմանություն, - աշխատանք տեղեկագրով, - ռեֆերատ, - ինքնուրույն աշխատանք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ստուգարքը անցկացվում է մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/և վերջում ներկայացրած աշխատանքների առկայությամբ՝ գրավոր և բանավոր թարգմանություններ, ռեֆերատ, պրեզենտացիա, խմբային աշխատանք, ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: Թեմա 2.Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Տնտեսություն և ֆինանսներ: Թարգմանություններ անգլերենից հայերեն, հայերենից անգլերեն:		

Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., Basic English for University Students, Yerevan: YSU Press, 2004.
2. Zatikyan, A.T. Economics and Business, Yerevan, 1992.
3. Gevorgyan, G., Galstyan, A. English Armenian. More Commonly Used Words and Combinations, Yerevan: Areg, 2005.
4. World Book, Encyclopedia, 2002.

0305/B17	Ֆրանսերեն-1	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, հարստացնել այս փուլում ստացած գիտելիքները, որպեսզի դրանք հիմք հանդիսանան հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար: Դասընթացի խնդիրներն են. • տարբեր տեսակի գիտելիքների ձեռքբերում. քերականական, մշակութային, գրել, կարդալ, խոսել, • տարբեր տեսակի կարողությունների և հմտությունների զարգացում. խոսողական, լեզվական, ռազմավարական, համագործակցության, ինքնակատարելագործման և ստեղծագործականության: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները: 2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները: 2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները: 3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ): 4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն: 2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները: 3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր: 4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու: Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • խմբային և անհատական աշխատանք, • շնորհանդես, • մենախոսություն, • բանավոր քննարկում: Գնահատման մեթոդները և չափանիշներն են.		

սույն դասընթացի համար նախատեսված է ստուգարք, որն անցկացվում է բանավոր հարցման միջոցով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա 2. Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա 3. Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Թեմա 5. Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: Թեմա 6. Անձնականան շեշտ դերանուններ, դրանց գործածու թյունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ: Թեմա 7. Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les fu-nerailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour-fleurs, des casse-croute և այլն): Հիմնական գրականության ցանկ 1. Jean-Luc Penformis-Méthode de français professionnel et des affaires, niveau débutant, CLE international, Paris, 2011 2. Պոպովա Ն, Կազակովա Գ., Ֆրանսերենի ձեռնարկ, Մոսկվա, 2006թ. 3. Մոժե Գ., Ֆրանսերեն լեզվի և քաղաքակրթության կուրս, Փարիզ, 1992թ. 4. Alfred Fontenilles, Mark Heimerdinger <La vie des affaires> 2001, Paris.

0305/B18	Ֆրանսերեն-2	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ: Դասընթացի խնդիրներն են. • բասնագիտական բառապաշարի և տերմինների, ինչպես նաև խոսքային գործունեության հիմնական ձևերի տիրապետումը, • տարբեր տեսակի կարողությունների և հմտությունների զարգացում. թարգմանություն, բանավոր խոսքի ձևավորում, սեփական կարծիքի արտահայտում: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները: 2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները: 2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները: 3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ): 4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն: 2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները: 3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր: 4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական		

տեքստեր:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • խմբային և անհատական աշխատանք, • շնորհանդես, • մենախոսություն, • բանավոր քննարկում:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. դասընթացի համար նախատեսված է ստուգարք, որն անցկացվում է բանավոր հարցման միջոցով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝ un homme grand-un grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: Թեմա 2. Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, le quel և այլն (դասակարգում): Թեմա 3. Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Հղական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում: Թեմա 4. Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղական եղանակ), imperatif (հրամայական եղանակ): Թեմա 5. Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ: Թեմա 6. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում, քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ:		
Հիմնական գրականության ցանկ 1. Sona Hovhannissyan, Le français commercial,, Erevan, 2005 2. В.Г. Матвеев, В. П. Хобхун, Бизнес-курс французского языка, ЗАО «Славянский дом книги», Москва, 2001 3. Jean-Luc Penfornis, Vocabulaire progressif du français des affaires, CLE international, Paris, 2004 4. G. Marhens, L. Martin, <Tout va bien>,2004		

0001/B03, B10	Ֆիզդաստիարակություն	0 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին , 2-րդ կիսամյակներ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակչիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի. • ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը, • նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը, • բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի		

միջոց, • նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը, • զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն: Դասընթացի խնդիրներն են. • հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում, • ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ, • ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում, • ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք, • ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: 2. Թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը: 3. Ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները: 4. Ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները: 5. Առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ): 2. Ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում: 3. Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը: 2. Դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից: 3. Կազմելու իր և ընկերների խառնուրդ կենսակերպի ապահով ման ուսումնամարզական պարապմունքների պլան:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:	Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. վերահսկողական ուսումնական պարապմունքներ .

• տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), • մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), • ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), 2. արտաուսումնական պարապմունքներ. • ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, • վերականգնողական միջոցառումների իրականացում, • մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, • ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, • մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, • մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. դասընթացն ավարտվում է ստուգաթուղ: Ստուգաթուղ համարվում է հանձնած, եթե ուսանառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվներին պահանջներին:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. <u>1-ին կիսամյակ՝ աշնանային</u> Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլը: Թեմա 2. Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: Թեմա 3. Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: Թեմա 4. Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ): <u>2-րդ կիսամյակ՝ գարնանային</u> Թեմա1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստու թյան դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնձի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնձի երկարությամբ: Թեմա2. Ֆիզիկական բեռնվածու թյան ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: Թեմա 3. Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերնից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: Թեմա 4. Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: Թեմա 5.

Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 8.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մամվելյան Լ.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեայան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս.Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

0001/B12, B14	Ֆիզդաստիարակություն	0 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
3-րդ, 4-րդ կիսամյակներ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները ձևավորել • ուսանողների ֆիզիկական զարգացման, բարոյական և կամային հատկանիշները, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում, • ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք, • ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններն ու հմտություններ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը: 2. Ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսալադանների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ: 3. Հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկել հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման		

բնութագրերը: - Թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանել անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը: - Ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանել նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ բ. գործնական մասնագիտական կարողություններ - Պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները - Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր - Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ - Կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերել նորմատիվներին համապատասխան արդյունքներ գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարարականի փոխադարձ վերահսկողություն - Աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնել իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ - Վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները - Կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս - Կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպել խնդիրներ և լուծելու,
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - վերահսկողական ուսումնական պարապմունքներ . - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), - արտաուսումնական պարապմունքներ. - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, - վերականգնողական միջոցառումների իրականացում, - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:	Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների

պահանջներին:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. 3-րդ կիսամյակ՝ աշնանային Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: Թեմա 2. Շարային պատրաստու թյուն, դարձումներ տեղում, շարային քայլք: Թեմա 3. Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Թեմա 4. Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: Թեմա 5. Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Թեմա 6. Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: Թեմա 7. Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: Թեմա 8. Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: Թեմա 9. Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: Թեմա 10. Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով: 4-րդ կիսամյակ՝ գարնանային Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: Թեմա 2. Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: Թեմա 3. Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: Թեմա 4. Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերնից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: Թեմա 5. Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: Թեմա 6. Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: Թեմա 7. Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: Թեմա 8. Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: Թեմա 9. Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: Թեմա 10. Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Թեմա 11. Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: Թեմա 12. Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: Թեմա 13. Ստուգարքային ձևերի նախապատրաստում:
Հիմնական գրականության ցանկ 1. Սամվելյան Լ.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսում-նական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ. 2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002: 3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:

4. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս.Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0303/B19	Բարոյագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափոխության և աշխարհայացքի ձևավորմանը: Դասընթացի խնդիրներն են. • ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին, • ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին, • նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը, • ացահայտել բարոյական իդեալի էությունը ազգային և համամարդկային տեսանկյունից, • վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները, • նդլայնել սովորողների մտահորիզոնը: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները: 2. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին: 2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգային և համամարդկային տեսանկյունից: 3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝		

Գ4. պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ7. ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • քննարկումներ, • գեկուցումներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքի համար անց է կացվում բանավոր հարցում:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. Թեմա 1. Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Թեմա 2. Բարին և չարը: Թեմա 3. Պարտք և պատասխանատվություն: Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: Թեմա 5. Խիղճ: Բարոյական իդեալ: Թեմա 6. Կյանքի իմաստն ու նպատակը: Թեմա 7. Երջանկություն, սեր: Բաժին 2. Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: Բաժին 3. Բարոյականություն և ազատություն: Թեմա 10. Անձը և համակեցությունը: Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը: Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները: Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը: Բաժին 5. Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակույթային արժեհամակարգի համատեքստում: Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն:		
Հիմնական գրականության ցանկ. 1. А. Разин, Этика, Москва, 2003. 2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004. 3. Дж. Мур, Принципы этики, Москва, 1984. 4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000. 5. Словарь по этике.		

0105/ B19	Բնագիտության ժամանակակից հայացակարգեր	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3 –րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը: Դասընթացի խնդիրներն են.		

• ձևավորել բնագիտական աշխարհայացք, • ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը, • բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները, • ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը: 2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին: 3. Մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում: 2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին: 3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը: 2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան: 3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտու թյունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ5.գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • խսքային (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը), • գործնական (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը), • տրամաբանական (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա), • ճանաչողական-ստեղծագործական (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական), • համագործակցային ուսուցման (թիմային և խմբային աշխատանքներ), • քննադական մտածողության, • ինքնուրույն աշխատանքի:
Գնահատման մեթոդները. ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք՝ ռեֆերատ: Ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու և անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին ապահովվելու դեպքում նշանակվում է ստուգված:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: Թեմա 2. Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: Թեմա 3. Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Թեմա 4. Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում:

արիում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Հիմնական գրականության ցանկ

1. Ասլանյան Լ.Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Երևան, 2007
2. Канке В.А. Концепции современного естествознания, Логос. Москва, 2002
3. Под. редакц. Л.А.Михайлова, Концепции современного естествознания Питер 2008 .

0201/B19	Գործարարության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ: Դասընթացի խնդիրներն են. • փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմա-կերպման վերաբերյալ, • մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարության գրադվելու համար, • հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատաս-խանատվության վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները: 2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: 3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը: 4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը: 2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը: 3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում: 4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան) 1. Աշխատելու թիմում: 2. Մոտիվացնելու: 3. Առաջնորդելու: 4. Աշխատելու տեղեկատվության հետ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ1.դասակարգելու ռիսկերը և կայացնելու ֆինանսական որոշումներ, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • գործնական խաղ /թիմային աշխատանք/, • դասախոսություն, • սեմինար, • ինքնուրույն աշխատանք /գեկույց,ռեֆերատ/, • ճանաչողական այցեր:		

Գնահատման մեթոդները և չափանիշներն են. վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց է կացվում գրավոր:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից Թեմա 1. Գործարարության էությունը և ֆունկցիաները: Թեմա 2. Գործարարության միջավայրը և տեսակները: Թեմա 3. Գործարարության սուբյեկտները: Թեմա 4. Ձեռնարկության կազմակերպարարական ձևերը: Թեմա 5. Բիզնես-գաղափարը և բիզնես հաեցակարգը, որպես գործարարության նախադրյալ: Թեմա 6. Մարքեթինգի պլան: Թեմա 7. Գործունեության կադրային ապահովումը: Թեմա 8. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: Թեմա 9. Արտադրական պլան: Թեմա 10. Ինքնարժեքի կալկուլյացիա: Թեմա 11. Ձեռնարկատիրական ռիսկ: Թեմա 12. Ֆինանսական պլանավորում:		
Հիմնական գրականության ցանկ 1. М.Н.Кондратьева, Е.В.Баландина, Ю.С.Трефилова, Бизнес-планирование, учебное пособие, Ульяновск УлГТУ 2014 /http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/ 2. В.Ю. Буров, Основы предпринимательства, учебное пособие, Чита – 2011 3. В.А.Богомолова, Н.М.Белоусова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, Бизнес-планирование, учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgur.ru/6/bogomolova_2014.pdf/ 4. С.И.Башаримова, М.В.Дасько, Основы предпринимательства, учебное пособие, 5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, Основы предпринимательской деятельности, учебное пособие, Санкт-Петербург 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf/		

0304/B19	Կրոնագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են. • ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ, • ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք: 2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները: 2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝		

Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • քննարկումներ, • բանավեճ, • զեկուցում, • ռեֆերատ, • անհատական և խմբային առաջադրանքներ:		
Գնահատման մեթոդները. ստուգաբարձ գնահատվում է վերջնարդյունքների ձևավորումը՝ բանավոր հարցումով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Թեմա 2. Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Թեմա 3. Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Թեմա 4. Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Թեմա 5. Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Թեմա 6. Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Թեմա 7. Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: Թեմա 8. Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: Թեմա 9. Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Թեմա 10. Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:		
Հիմնական գրականության ցանկ 1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002: 2. Աստվածաշունչ: 3. Գուրան, Սոֆիա, 1929: 4. Երուանդ Վրդ. Տեր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հ. Ա, Հին եկեղեցին, Էջմիածին, 1908: 5. Алов А.А., Владимирова Н.Г., Овсиенко Ф. Г., Мировые религии, М., 1998. 6. История религии, Т. 1-2, М., 2002. 7. Encyclopedia of religion and ethics, New York, 1961-1964.		

0303/B19	Հոգեբանության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	Ստուգաբարձ	
Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, ծանոթացնել հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին: Ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզականային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները: Դասընթացի խնդիրներն են. • բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, • լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, • ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական,		

պաշտամունքային, տոնաձիսական առանձնա-հատկություններ ունեն դրանք: 2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները: 2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու, Գ7.ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • քննարկում, • բանավեճ, • գործնական պարապմունք, • ռեֆերատ/էսսե, • անհատական և խմբային առաջադրանքներ:
Գնահատման մեթոդները. Ստուգարքով գնահատվում է վերջնարդյունքների ձևավորումը՝ անց է կացվում բանավոր հարցում:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: Թեմա 2. Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: Թեմա 3. Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: Թեմա 4. Հոգեկանի ակտիվության մակարդակները: Թեմա 5. Հոգեկանի և գիտակցության զարգացումը: Թեմա 6. Անձի հոգեբանական բնութագիրը: Թեմա 7. Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: Թեմա 8. Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: Թեմա 9. Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: Թեմա 10. Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: Թեմա 11. Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: Թեմա 12. Մտածողություն, տեսակները, գործընթացները: Թեմա 13. Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: Թեմա 14. Անձի հուզականային կողմը: Թեմա 15. Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:
Հիմնական գրականության ցանկ 1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010 2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997 3. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005 4. Маклаков А.Г. Общая психология. М., 2007 5. Немов, Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003). 6. Столяренко, Людмила Дмитриевна. Психологии.учебник для вузов.-СПб.: Питер,2010.-592 с. 7. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005

0202/ B19	Մշակութաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա: Դասընթացի խնդիրներն են. • ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ, • ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները: 2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները: 2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան: 3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում: 2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5.գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • քննարկումներ, • բանավեճեր, • ռեֆերատներ, • զեկուցումներ:		
Գնահատման մեթոդները. ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Թեմա 2. Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: Թեմա 3. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: Թեմա 4. Մշակույթ-բնություն-հասարակություն: Թեմա 5Ձ Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): Թեմա 6. Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: Թեմա 7. Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: Թեմա 8. Վերածնունդ և Ռեֆորմացիա: Թեմա 9. Նոր դարաշրջանի		

եկրոպական մշակույթը: Թեմա 10. Սոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: Թեմա 11. Հայկական մշակույթ:
Հիմնական գրականության ցանկ 1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000: 2. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997 3. Սարգսյան Ս.Ա., Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004: 4. Арутюнов С.А., Рыжакова С. И., Культурная антропология, М., 2004. 5. Розин В. М., Культурология, М., 1998.

0304/B19	Տրամաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, գերծ մնալ տրամաբանական այն սխալներից:		
Դասընթացի խնդիրները են. • ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները, • ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ, • ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին, • ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները: 2. Մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերություններին, տրամաբանական հիմնական օրենքները: 3. Սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները: 2. Ջանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները: 3. Ջանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝		
Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը,		
Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,		
Գ7. ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն, • քննարկում, • բանավեճ:		

Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքով գնահատվում է վերջնարդյունքների ձևավորումը՝ անց է կացվում բանավոր հարցում: Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հասկացություն: Թեմա 3. Դատողություն: Թեմա 4. Տրամաբանության օրենքները: Թեմա 5. Մտահանգում: Թեմա 6. Ապացուցում և հերքում: Թեմա 7. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ: Հիմնական գրականության ցանկ. 1. Բրուսյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976: 2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975. 3. Гетманов А., Логика, Москва, 1993. 4. Маковелский А., История логики, Москва, 1967. 5. Демидов И., Логика, Москва, 2004:
--

0304/B19	Քաղաքագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ: Դասընթացի խնդիրներն են. • ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները, • ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները • ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները: 2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները: 3. Թվարկելու ու մեկնաբանել պետական կառավարման ձևերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները: 2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը: 3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 2. Աշխատելու թիմում: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5. գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը, Գ7. ճիշտ գնահատելու սեփական ունակությունները և որոշում կայացնելու հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելա-գործման համար: Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն • քննարկումներ • բանավեճեր		

• զեկուցումներ:
Գնահատման մեթոդները. ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: Թեմա 2. Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: Թեմա 3. Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: Թեմա 4. Քաղաքական ընտրանի /էլիտա/: Թեմա 5. Քաղաքական լիդերություն: Թեմա 6. Քաղաքական ռեժիմներ: Թեմա 7. Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: Թեմա 8. Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Թեմա 9. Քաղաքացիական հասարակություն: Թեմա 10. Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: Թեմա 11. Ընտրություններ և ընտրական համակարգեր: Թեմա 12. Գաղափարախոսությունների տեսություն: Թեմա 13. Ազգեր և ազգային քաղաքականություն: Թեմա 14. Քաղաքականությունը և կրոնը: Թեմա 15. Քաղաքական մշակույթ:
Հիմնական գրականության ցանկ. 1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006: 2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004. 3. Гаджиев К.С. Политология. Москва, 2005. 4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999. 5. Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002. 6. Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПИ, Москва, 1998.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0105/B20	Մաթեմատիկական անալիզ-1	6 կրեդիտ
6 ժամ/շաբ.	45/45/0	
1-ին կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մաթեմատիկական անալիզի ներածական մասը՝ իրական թվեր, հաջորդականություն, ֆունկցիա, սահման, անընդհատություն, ածանցյալ, կիրառություններ: Դասընթացի խնդիրներ են. • մաթեմատիկական հիմնարար պատրաստվածության անհրաժեշտ մակարդակի ձևավորում, • կողմնորոշել կիրառական խնդիրներ լուծելու ժամանակ օգտվել մաթեմատիկական մեթոդներից, • զարգացնել տրամաբանական մտածողություն:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու հաջորդականության և ֆունկցիայի սահմանների, անընդհատ ֆունկցիաների, ածանցյալի հիմնական հատկությունները: 2. Ներկայացնելու մաթեմատիկական անալիզի ներածական մասի հիմնական գաղափարներն ու սահմանումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Հաշվելու հաջորդականության և ֆունկցիայի սահմանները: 2. Պարզելու ֆունկցիայի անընդհատությունը: 3. Հաշվելու ածանցյալներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կիրառելու յուրացրած մաթեմատիկական գաղափարները տնտեսագիտության մեջ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝		

Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Բ3.գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր • խմբային աշխատանքներ • ռեֆերատներ • անհատական աշխատանք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ընթացիկ քննություններ, եզրափակիչ քննություն: Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով՝ միավորների քայլը 0,5 է: Բանավոր քննությունը՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2,5-ական միավոր՝ միավորների քայլը 0,5 է:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Թվային հաջորդականություններ, հաջորդականության սահ-մանը: Զուգամետ հաջորդականությունների հատկու թյունները: Թեմա 2. Մասնակի հաջորդականություններ: Մոնոտոն հաջորդականություններ, e-թիվը: Թեմա 3. Թվային շարքեր, շարքի գումարը: Թվային շարքի զուգամիտության հայտանիշները: Թեմա 4. Բացարձակ և պայմանական զուգամետ շարքեր: Լայբնիցի հայտանիշը: Թեմա 5. Ֆունկցիայի սահմանը: Ֆունկցիայի սահմանի Հայնեի և Կոշիի սահմանումների համարժեքությունը: Թեմա 6. Մեկ փոփոխականի ֆունկցիայի անընդհատությունը կետում և բազմության վրա: Խզման կետերի դասակարգումը: Թեմա 7. Անընդհատ ֆունկցիաների լոկալ և գլոբալ հատկությունները: Վայերշտրասի և Բոլցանո-Կոշիի թեորեմները: Թեմա 8. Ածանցյալ: Երկրաչափության, ֆիզիկայի և տնտեսագիտության խնդիրներ, որոնք հանգեցնում են ածանցյալի գաղափարին: Թեմա 9. Տարրական ֆունկցիաների ածանցյալները, ածանցման կանոնները, բարդ և հակադարձ ֆունկցիաների ածանցյալները: Լոգարիթմական ածանցյալ: Թեմա 10. Անորոշությունների բացումը: Լուպիտալի կանոնը: Թեմա 11. Մի քանի փոփոխականի ֆունկցիայի սահմանը, հաջորդական սահմաններ: Մի քանի փոփոխականի ֆունկցիայի անընդհատությունը: Թեմա 12. Մի քանի փոփոխականի ֆունկցիայի մասնակի ածանցյալներ, ածանցյալ ըստ ուղղության, գրադիենտ:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Մովսիսյան Յու.Ս., Բարձրագույն հանրահաշիվ, ԵՊՀ, Երևան. 1983թ. 2. Գևորգյան Գ.Գ. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, հ. առաջին, Երևան, 2002թ. 3. Никольский С. М., Математический анализ, М. т 1,2,1999г. 4. Кудрявцев Курс математического анализа, т 1, М. 1999г.		

0105/B22	Մաթեմատիկական անալիզ-2	5 կրեդիտ
5 ժամ/շաբ.	45/30/0	
2-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համապատասխան մաթեմատիկական հենք՝ ֆակուլտետում դասավանդվող «Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ», «Հավանականություն և կիրառական վիճա կագրություն», «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն» և այլ դասընթացների յուրացման համար: Դասընթացի խնդիրներն են. • մաթեմատիկական խնդիրների հետազոտման մեթոդների խորացված ուսումնասիրություն, • մաթեմատիկական կիրառական խնդիրների ձևակերպում, վերլուծություն և լուծում, • ալգորիթմիկ մտածողության զարգացում, • մաթեմատիկական գիտելիքների ինքնուրույն զարգացման ունակությունների ձևավորում:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու և մեկնաբանելու դիֆերենցելի ֆունկցիաների, ինտեգրելի ֆունկցիաների և ինտեգրալի հատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Հետազոտելու ֆունկցիաները ածանցյալի միջոցով: 2. Հաշվելու անորոշ և որոշյալ ինտեգրալներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները տնտեսագիտության խնդիրներում:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա2.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Բ4.կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր • խմբային աշխատանքներ • ռեֆերատներ • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ընթացիկ քննություններ՝ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն՝ Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ֆունկցիայի էքստրեմումի անհրաժեշտ և բավարար պայմանները: Թեմա 2. Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները՝ Ռոլի, Լագրանժի և Կուշիի թեորեմները: Թեմա 3. Թեյլորի բանաձևը և նրա մնացորդային անդամը: Թեմա 4. Ֆունկցիայի գրաֆիկի ասիմպտոտները: Ֆունկցիայի գրաֆիկի ուռուցիկությունը, շրջման կետեր: Թեմա 5. Անընդհատ ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները հատվածում: Մեկ փոփոխականի ֆունկցիայի գրաֆիկի կառուցման փուլերը: Թեմա 6. Նախնական ֆունկցիա և անորոշ ինտեգրալ: Անորոշ ինտեգրալի հատկությունները: Թեմա 7. Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը

անորոշ ինտեգրալում: **Թեմա 8.** Որոշյալ ինտեգրալի սահմանումը, կորագիծ սեղանի մակերեսի հաշվումը, տնտեսագիտական խնդիրներ: **Թեմա 9.** Դարբուի գումարները և նրանց հատկությունները: Որոշյալ ինտեգրալի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը: **Թեմա 10.** Ինտեգրելի ֆունկցիաների դասերը՝ անընդհատ ֆունկցիայի և մոնոտոն, սահմանափակ ֆունկցիայի ինտեգրելիությունը: **Թեմա 11.** Որոշյալ ինտեգրալի հատկությունները: Միջին արժեքի թեորեմ: **Թեմա 12.** Փոփոխական վերին սահմանով ինտեգրալի անընդհատությունը, դիֆերենցելիությունը: **Թեմա 13.** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը որոշյալ ինտեգրալում: **Թեմա 14.** Որոշյալ ինտեգրալի կիրառությունները բնագիտությունում և տնտեսագիտությունում: **Թեմա 15.** Անխսկական ինտեգրալներ: I և II սեռի անխսկական ինտեգրալների գույամիտությունը: **Թեմա 16.** Սովորական դիֆերենցիալ հավասարումների տեսության տարրերը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մովսիսյան Յու.Ս., Բարձրագույն հանրահաշիվ, ԵՊՀ, Երևան, 1983թ.
2. Ղազարյան Հ.Գ. և ուրիշներ, Սովորական դիֆերենցիալ հավասարումներ, Երևան, 2002թ.
3. Ղազարյան Հ.Գ. և ուրիշներ, Սովորական դիֆերենցիալ հավասարումների խնդրագիրք, Երևան, 1987թ.
4. Գևորգյան Գ.Գ. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, հ. երկրորդ, Երևան 2003թ.
5. Օհանյան Վ.Հ., Մաթեմատիկական անալիզ: - Դասախոսություններ, առաջին մաս, ԵՊՀ, 2008թ.:

0201/B21	Տնտեսագիտական տեսություն-1	6 կրեդիտ
6 ժամ/շաբ.	45/0/45	
1-ին կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է լուսաբանել շուկայական տնտեսության գործառնությունը և միկրոտնտեսական օրինաչափությունները ըստ տարբեր շուկայական կառուցվածքների: Տալ անհրաժեշտ գիտելիքներ և օժանդակել բավարար ունակությունների ձևավորմանը միկրոտնտեսական իրավիճակները վերլուծելու և հետազայում ուսուցանվող տնտեսագիտական մյուս դասընթացների նյութը առավել հիմնավոր յուրացնելու համար: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տալ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և դրանք միկրոմակարդակում կիրառելու համար, • ստեղծել անհրաժեշտ հիմքեր միկրոտնտեսագիտական դասընթացների յուրացման համար:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական օրինաչափությունները: 2. Բացատրելու տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և կառավարության տնտեսական վարքի հիմնական սկզբունքները, ինչպես նաև ռեսուրսների և պատրաստի արտադրանքի շուկաների մոդելները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու շուկայական հավասարակշռության հաստատման մեխանիզմի առանձնահատկությունները: 2. Վերլուծելու ապրանքների և ծառայությունների համապատասխան շուկայական կառուցվածքներում տնտեսական արդյունավետության գնահատման չափանիշները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Մեկնաբանելու միկրոտնտեսագիտական հիմնարար հասկացությունները և սկզբունքները և դրանք կիրառելու միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական, ինչպես նաև ճյուղային ու գործառնական բնույթի տեսական, գործնական և հատուկ դասընթացներում:		

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Ա8.մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/, • սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցադրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/, • ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված է. • 1-ին ընթացիկ քննություն. գրավոր քննություն՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է: • 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր քննություն՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է: • եզրափակիչ քննություն. բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տնտեսագիտության ներածություն: Թեմա 2Ձ Շուկայական համա-կարգը: Պահանջարկը, առաջարկը և շուկայական հավասարակշռությունը: Թեմա 3. Պահանջարկի և առաջարկի առաձգականությունները: Թեմա 4. Սպառողի վարքի վերլուծությունը: Թեմա 5. Արտադրողի վարքը և տեխնոլոգիայի ընտրությունը: Արտադրական ֆունկցիան: Թեմա 6. Արտադրության ծախքերը: Թեմա 7. Մրցակցային ձեռնարկությունները և մրցակցային շուկաները: Թեմա 8. Մենաշնորհը շուկայական տնտեսությունում: Թեմա 9. Անկատար մրցակցությունը. մենաշնորհային մրցակցությունը և օլիգոպոլիս: Թեմա 10. Արտադրության գործոնների շուկան. աշխատանքը, հողը և կապիտալը:		
Հիմնական գրականության ցանկ 1. Ջեյմս Դ.Գոոթնի, Ռիչարդ Լ.Ստրոուպ, Տնտեսագիտություն. մասնավոր և հասարակական ընտրություն (թարգմանություն): Գլխավոր խմբագիր՝ պրոֆ. Գ.Կիրակոսյան, ԵրՊԺՏԻ-ի «Տնտեսագետներ հրատ., 1999 2. К.Р. Макконелл, С.Л. Брю, Экономикс: принципы, проблемы и политика: пер. 17-го англ.Изд. – М.: ИНФРА-М, 2009. – XXVIII, 916 с. [և հետագա հրատարակություններ] 3. Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հայկ Սարգսյան, Հասմիկ Մարգարյան. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ: Գիտ. խմբ.՝ Հ.Աղաջանյան, Գ.Գալստյան, (երկրորդ հրատարակություն, լրամշակված և վերախմբագրված): - Եր., ԵՊՀ հրատ., 2017, 320 էջ: 4. Курс экономической теории: учеб. пособие для студентов вузов /под ред. А.В.Сидоровича/; МГУ 3-е изд. – Москва, 2007.-1040 с. 5. Нуреев Р. М., Курс микроэкономики: Учебник для вузов. – М., 2008.		

0201/B25	Տնտեսագիտական տեսություն-2	6 կրեդիտ
----------	----------------------------	----------

6 ժամ/շաբ.	45/0/45
2-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ
Դասընթացի նպատակն է լուսաբանել շուկայական տնտեսության՝ որպես ամբողջական համակարգի գործառնության մակրոտնտեսական օրինաչափությունները: Տալ անհրաժեշտ գիտելիքներ և օժանդակել բավարար ունակությունների ձևավորմանը մակրոտնտեսական իրավիճակները վերլուծելու և հետագայում ուսուցանվող տնտեսագիտական մյուս դասընթացների նյութը առավել հիմնավոր յուրացնելու համար: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տալ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և դրանք վերլուծության միջոցով մակրոմակարդակում կիրառելու համար, • ստեղծել անհրաժեշտ հիմքեր մակրոտնտեսագիտական դասընթացների յուրացման համար:	
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները: 2. Բացատրելու մակրոտնտեսական հավասարակշռության մոդելները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերլուծելու պետության տնտեսական քաղաքականության նպատակները և եղանակները: 2. Մեկնաբանելու տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Մեկնաբանելու միկրոտնտեսագիտական հիմնարար հասկացությունները և սկզբունքները և դրանք կիրառելու միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական, ինչպես նաև ճյուղային ու գործառնական բնույթի տեսական, գործնական և հատուկ դասընթացներում:	
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Ա8.մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:	
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/, • սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցադրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/, • ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:	
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված է. • 1-ին ընթացիկ քննություն. գրավոր քննություն՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է: • 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր քննություն՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է: • Եզրափակիչ քննություն. բանավոր քննություն՝ 10 միավոր առավելագույն արժեքով:	

Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայքայ 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Ազգային արդյունքը: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 2.** Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: **Թեմա 3.** Հիմնական մակրոտնտեսական կախվածությունները: **Թեմա 4.** Ամբողջական ծախսումները և արտադրության հավասարակշիռ ծավալը: **Թեմա 5.** Ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը ու հավասարակշռությունը: **Թեմա 6.** Ֆինսկալ քաղաքականությունը: **Թեմա 7.** Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականությունը: **Թեմա 8.** Ընդհանուր հավասարակշռության թյունը՝ «IS-LM» մոդելը: **Թեմա 9.** Տնտեսական աճը: **Թեմա 10.** Մակրոտնտեսական քաղաքականությունը և տեսությունը. բանավիճային հարցեր:

Հիմնական գրականության ցանկ

1. Մենքյու Ն.Գ., Մակրոէկոնոմիկա: Թարգմ. անգլ., «Հայաստան» 1997
2. К.Р.Макконелл, С.Л.Брю, Экономикс: принципы, проблемы и политика: пер. 17-го англ.Изд. – М.: ИНФРА-М, 2009. – XXVIII, 916 с. [և հետագա հրատարակություններ]
3. Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հայկ Մարգարյան, Հասմիկ Մարգարյան. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ: Գիտ. խմբ.՝ Հ.Աղաջանյան, Գ.Գալստյան, (երկրորդ հրատարակություն, լրամշակված և վերախմբագրված): - Եր., ԵՊՀ հրատ., 2017, 320 էջ:
4. Курс экономической теории: учеб. пособие для студентов вузов /под ред. А.В.Сидоровича/; МГУ 3-е изд. – Москва, 2007.-1040 с.
5. Агапова Т.А., Серегина С.Ф., Макроэкономика: Учебник МГУ. - М.: изд. Дело и сервис. 2009.

0105/B23	Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ	5 կրեդիտ
5 ժամ/շաբ.	45/30/0	
2-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել վերլուծական երկրաչափության գիտելիքների անհրաժեշտ հենք՝ գծային հանրահաշիվի, մաթեմատիկական անալիզի դասընթացներում և որոշ տնտեսական մոդելներում օգտագործելու համար:

- Դասընթացի խնդիրներն են.**
- ծանոթացնել գծային հանրահաշիվի արդիական մեթոդներին,
 - տնտեսության վերլուծության խնդիրներում գծային հանրահաշիվի արդիական մեթոդների կիրառություններին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բացատրելու գծային հավասարումների համակարգերի լուծման Գաուսի և Կրամերի եղանակները:
2. Սահմանելու ուղղի և հարթության հավասարումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարելու գործողություններ վեկտորների և մատրիցների հետ, լուծել գծային հավասարումների համակարգեր:
2. Հաշվելու տրված վեկտորների սկալյար, վեկտորական և խառն արտադրյալները:
3. Հաշվելու երկու ուղիղների, երկու հարթությունների, ուղղի և հարթության կազմած անկյունը, կետի հեռավորությունը ուղղից և հարթությունից:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները գործնականում:
2. Կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները տնտեսագիտության մեջ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.
 Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝
Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները,

մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, F7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր • խմբային աշխատանքներ • ռեֆերատներ • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր առավելագույն արժեքով: <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից Թեմա 1. Վեկտորները որպես ուղղորդված հատվածներ: Վեկտորի կոորդինատները: Գործողություններ վեկտորների հետ: Վեկտորի պրոյեկցիա: Սկալյար արտադրյալ: Համագիծ, համահարթ, օրթոգոնալ վեկտորներ: Թեմա 2. Ուղղի ընդհանուր, նորմալ, պարամետրական, կանոնական հավասարումները հարթության մեջ: Ուղիղների փոխդասավորվածությունը: Կետի հեռավորությունն ուղղից: Երկու անհայտով գծային անհավասարումներ: Թեմա 3. Հարթության ընդհանուր և նորմալ հավասարումները, կետի հեռավորությունը հարթությունից: Ուղիղը որպես հարթությունների հատում: Ուղղի պարամետրական կանոնական հավասարումները տարածությունում: Երեք անհայտով գծային անհավասարումներ: Թեմա 4. Ճառագայթի, կիսահարթության, կիսատարածության ուռուցիկությունը: Ուռուցիկ բազմությունների հատումը: Բազմության ուռուցիկ թաղանթ: Ուռուցիկ բազմանիստ: Ֆարկաշի թեորեմը: Թեմա 5. Տեղափոխություններ և տեղադրություններ, նրանց զույգությունը, քանակը: ո-րդ կարգի որոշիչ, նրա հատկությունները: Միևնույն լրացուցիչ միևնույն հանրահաշվական լրացում, Լապլասի թեորեմը: Գծային հավասարումների համակարգի լուծման Գաուսի մեթոդը, Կրամերի կանոնը: Թեմա 6. Մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: Չվերասերված քառակուսի մատրիցի հակադարձը, միավոր մատրից: Մատրիցային հավասարումներ: Քառակուսի մատրիցների արտադրյալի որոշիչը: Թեմա 7. Գծային տարածության սահմանումը, աքսիոմները և դրանց հետևանքները: Գծային տարածության վեկտորների անկախ և կախյալ համակարգեր: Վեկտորների համակարգի բազա (առավելագույն անկախ ենթահամակարգ) և ռանգ: Գծային տարածության բազիս: Մատրիցի ռանգը որպես սյուն վեկտորների համակարգի ռանգ: Մատրիցի ռանգը 0-ից տարբեր միևնույնի միջոցով: Թեմա 8. Գծային հավասարումների համակարգի համատեղելիության Կրոնեկեր-Կապելիի թեորեմը:
Հիմնական գրականության ցանկ. 1. Փիլիպոսյան Վ.Ա., Օհնիկյան Հ.Հ., Վերլուծական երկրաչափության խնդրագիրք, ԵՊՀ , Երևան 2011թ. 2. Д.В.Беклемишев, Курс аналитической геометрии и линейной алгебры, ФИЗМАТЛИТ 2005г. 3. О.Н.Цубербиллер, Задачи и упражнения по аналитической геометрии,издательство <Лань>, 31 – е изд. Москва 2003, 4. Н.В. Ефимов, Краткий курс аналитической геометрии ФИЗМАТЛИТ, 2005г.

0104/ B24	Տնտեսագիտական ինֆորմատիկա	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	15/15/0	
2-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ մասնագիտական գործունեությունում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ: Ուսանողներին հաղորդել հաշվողական գործընթացների կազմակերպման և վերլուծության վերաբերյալ գիտելիքներ՝ ծրագրային տարբեր փաթեթների կիրառմամբ: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողները ծանոթ լինեն MS EXCEL միջավայրում VBA մակրոսներին, • ուսանողները կարողանան ստեղծել ծրագրեր, որոնց կիրառությունը կտրուկ կբարձրացնի աշխատանքների արդյունավետությունն ու ճկունությունը՝ ավտոմատացնելով աշխատանքը, • կարողանան տարբեր տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով ընտրել համապատասխան ալգորիթմ և հիմնավորել դրա կիրառման նպատակահարմարությունը տալ խնդրի լուծումը, աշխատացնել ծրագիրը և տեսնել արդյունքը:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ծրագրային կոդեր: 2. Բացատրելու vba-ծրագրավորման լեզվի հիմունքները: 3. Վերլուծելու և բացատրելու գործնական էթիկայի կանոնները և տնտեսագիտական խնդիրների մաթեմատիկական մոդելների լուծումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կազմելու ձեռնարկության ծախսերի հաշվման ծրագիրը 2. Օգտագործելու VBA ծրագրավորման լեզվի հնարավորությունները գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ Հավաքագրելու, վերլուծելու և պահպանելու տնտեսագիտական խնդիրների մաթեմատիկական մոդելների լուծման կարևորագույն արդյունքները:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՇ/, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ):		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • ռեֆերատ • ինքնուրույն աշխատանք • թեստ • զեկույց • ծրագրերի մշակում և ավտոմատացում: Դասընթացի վարման ընդհանուր ռազմավարության հիմքում ընկած է դասավանդման մեթոդների համապատասխանեցումը դասընթացի ելքային արդյունքներին:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է չորս հարց՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը՝ 0.5:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տնտեսական ինֆորմատիկա առարկայի ընդհանուր նկարագրությունը: Խնդիրների լուծման նախապատրաստական և իրականացման փուլերը: Ծրագրային ապահովումը և մակրոսների		

ստեղծումը: **Թեմա 2.** VBA ծրագրավորման լեզուն և նրա հիմնական տարրերը: **Թեմա 3.** VBA լեզվի օպերատորները: **Թեմա 4.** VBA պրոցեդուրաներ և ֆունկցիաներ: **Թեմա 5.** VBA ֆինանսական, վիճակագրական, մաթեմատիկական ֆունկցիաների կիրառությունը տնտեսագիտական հետազոտություններում: **Թեմա 6.** VBA-ում ֆորմաների, մենյուների և երկխոսային պատուհանների կիրառությունը: **Թեմա 7.** Նախագծերի ավտոմատացումը ղեկավարման էլեմենտների միջոցով:

Հիմնական գրականության ցանկ.

1. С.Роман, использование макросов в Excel.-СПБ.:Питер,2004.-507 с. ,ISBN 5-94723-584-6
2. Гарбер Г.З., Основы программирование на Visual Basic и VBA в Excel 2007, М.: СОЛОН-ПРЕСС, 2008, -192 с. 2.
3. Назаров С.В. и др., Программирование в пакетах MS Office:учеб. Пособие. М.: Финансы и статистика, 2007.
4. Слепцова Л.Д., Программирование на VBA в Microsoft Office 2010. М. : Издательский дом “Вильямс”, 2010. – 432 с.
5. Уокенбах Джон, Профессиональное рограммирование на VBA в Excel 2010. : Пер. с англ. М. : здательский дом “Вильямс”, 2011. – 944 с.
6. С.М.Лавров, EXCEL сборник примеров и задач Москва “Финансы и статистика“ 2002

0104/B26	Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	6 կրեդիտ
6 ժամ/շաբ.	45/45/0	
3-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տարբեր բնագավառներում առաջացած հիմնական գործնական խնդիրների մաթեմատիկական մոդելների կառուցման, դրանց միջոցով այդ խնդիրների լուծման եղանակների հետազոտման և կիրառման ունակություն: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողները ծանոթ լինեն գործույթների հետազոտում առարկայի հիմնախնդիրներին, • իմանան տնտեսական տարբեր երևույթների և գործընթացների ուսումնասիրման համար կիրառվող հիմնական տնտեսա-մաթեմատիկական մոդելները, • կարողանան տարբեր տնտեսագիտական խնդիրները լուծել համապատասխան մեթոդներով:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու գործույթների հետազոտման խնդիրների, մաթեմատիկական մոդելների կառուցման հանրահաշվական և երկրաչափական եղանակները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կատարելու գծային ծրագրավորման, հոսքային և խաղային խնդիրների լուծման ալգորիթմական հետազոտումը: 2. Կիրառելու հիմնական ալգորիթմները գործնական խնդիրները լուծելիս: 3. Վերլուծելու առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Թիմում աշխատելու, համագործակցելու ունակություններ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.		

• դասախոսություններ • շնորհանդեսներ • գործնական աշխատանք • ռեֆերատ • ինքնուրույն խնդիրների լուծումներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր, իսկ գործնական դասերի մասնակցությունից և ինքնուրույն աշխատանքներից՝ 1 միավոր: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Մաթեմատիկական մոդելների կառուցման սկզբունքները և նպատակային հայտանիշների մշակումը: Թեմա 2. Գծային ծրագրավորման ստանդարտ, երկակի, կանոնական խնդիրները, նրանց կապը, երկակիության թեորեմ: Թեմա 3. Գծային ծրագրման խնդիրների լուծման հիմնական եղանակները: Թեմա 4. Հոսքային խնդիրներ, նրանց կապը կոմբինատոր խնդիրների հետ, Ֆորդ-Ֆալկերսոնի թեորեմը և ալգորիթը: Թեմա 5. Դինամիկ ծրագրման եղանակը և այդ եղանակով խնդիրների լուծումը: Թեմա 6. Խաղային խնդիրներ, խաղերի տեսության հիմնական թեորեմ:
Հիմնական գրականության ցանկ 1. ոնոյան Ռ.Ն., «Գործույթների հետազոտման մաթեմատիկական խնդիրները, ԵՊՀ, Եր. 1999 2. Մ.Ա.Սահակյան, Հ.Լ.Սարգսյան, Ս.Դ.Սարգսյան, Ռ.Ն.Տոնոյան, «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, I հատոր, ԷԿԱԳՄԱՀԲ, Եր.1997 3. Մ.Ա.Սահակյան, Ն.Ա.Բեկնազարյան, Հ.Յ.Հակոբյան, Խ.Վ.Քերոբյան, «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, II հատոր Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, ՀՀԳԱԱ «Գիտությունն հրատարակչություն, Երևան 2001թ. 4. Մ.Սահակյան, «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ III Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, Խնդիրներ և վարժություններ է, ՀՀ ԳԱԱ, Եր. 2001 5. Տոնոյան Ռ.Ն., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, Եր., ԵՊՀ 1999 6. Харари, Теория графов, М. Мир 1979.

0201/B27	Ֆինանսական հաշվարկների հիմունքներ	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ապագա մասնագետների մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և պրակտիկ հմտություններ դրամական հոսքերի վերլուծության, ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման, ֆինանսավարկային հաստատությունների գործարքների տոկոսների, ֆինանսական շուկայում շրջանառվող հիմնական գործիքների արժեքի և եկամտաբերության որոշման նպատակով օգտագործվող ֆինանսական հաշվարկների վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու ֆինանսական հաշվարկների էությունը և դերը ֆինանսական կառավարման մեջ: 2. Գնահատելու ֆինանսական շուկաներում շրջանառվող ֆինանսական գործիքների եկամտաբերությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Հաշվարկելու արժեթղթերի արժեքը և եկամտաբերությունը: 2. Գնահատելու ներդրումային ծրագրերի արդյունավետությունը, իրա-կանացնելու տարբեր տեսակի վարկերի համեմատական վերլուծություն:		

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ): 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Բ6.մշակելու և գործնականում իրականացնելու բանկային հատվածի վարկային և ակտիվային այլ գործառնությունները, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • նախադեպերի վերլուծություն • խմբային աշխատանք • անհատական աշխատանք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների գնահատման նպատակով նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ֆինանսական հաշվարկների մաթեմատիկական հիմունքները Թեմա 2. Պարզ և բարդ տոկոսադրույք: Թեմա 3. Պարզ և բարդ զեղչադրույք: Թեմա 4. Համարժեք տոկոսադրույք և զեղչադրույք: Ինֆլյացիայի ներառումը ֆինանսական հաշվարկներում: Թեմա 5. Բերված արժեքի տնտեսագիտական բովանդակությունը և հաշվարկը: Անուիտետ:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Четыркин Е., «Финансовая математика», М., 2012. 2. Выгодчикова И.Ю. Процентный анализ финансовых потоков. Саратов: Изд-во СГУ, 2008. 3. Финансовая математика: математическое моделирование финансовых операций: учеб. пособие / под ред. В.А. Половникова, А.И. Пилипенко. М.: Вузовский учебник, 2007. 4. Капитоненко В.В. Задачи и тесты по финансовой математике. М.: Финансы и статистика, 2007 5. П.П. Бочаров, Ю.Ф. Касимов. Финансовая математика. М.: ФИЗМАТЛИТ, 2005.		

0105/B28	Հավանականությունների տեսություն	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
3-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հավանականության գաղափարին ու նրա կիրառություններին: Դասընթացի խնդիրներն են. • ուսումնասիրել պատահական փորձերի մաթեմատիկական մոդելների կառուցվածքը, • կատարելագործել ուսանողների մոտ կիրառական խնդիրների լուծման համար ստացված գիտելիքների օգտագործման հմտությունները, • զարգացնել ուսանողների մոտ այն ունակությունները, որոնք օգնում են ընկալել տարբեր համակարգերում կիրառվող մաթեմատիկական մոդելների հավանականային ունիվերսալությունը:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու փորձ, նրա տարրական ելքերը, տալու հավանականության դասական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումները, պայմանական հավանականության սահմանումը: 2. Սահմանելու պատահական մեծության թվային բնութագրիչները՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, մոդա, մոմենտ, ասիմետրիա, պատահական մեծության բաշխման ֆունկցիա, բաշխման շարք: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Հաշվելու պատահարի հավանականությունը՝ օգտագործելով հավանականության դասական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումները, փորձի տարրական ելքերը, պարզելու տրված պատահարների հավաստիությունը, հաշվելու պատահարի պայմանական հավանականությունը գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատանքի թիմում, հստակ ներկայացնելու միտքը, 2. օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած ինֆորմացիան, 3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 4. Լուծելու տնտեսագիտական և վիճակագրական խնդիրներ՝ կիրառելով հավանականությունների տեսություն մեթոդները:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա2.բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն • գործնական • քննարկում • զեկուցում • ռեֆերատ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հավանականության գաղափարի տարբեր սահմանումներ: Թեմա 2. Պայմանական հավանականություն: Լրիվ հավանականության բանաձև: Բայեսի բանաձև: Թեմա 3. Փորձարկումների հաջորդականություններ: Բեռնուլլիի անկախ փորձարկումների սխեման: Մուավրի-Լապլասի սահմանային թեորեմները: Թեմա 4. Պատահական մեծություն: Պատահական մեծության բաշխման օրենքներ:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Гнеденко, Курс теории вероятности и математической статистики”, 8-е изд., испр. и доп.—М.: Едиториал УРСС, 2005. 448 с. 2. Համբարձումյան Գ.Հ., Հավանականությունների տեսության դասընթաց, Երևան, 1971. 3. Մեսրոպյան Ն.Խ., Ղազանյան Տ.Պ., Հավանականությունների տեսության խնդրագիրք, Երևան, 1986.		

0201/B29	Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ	4 կրեդիտ
----------	------------------------------------	----------

4 ժամ/շաբ.	30/0/30
3-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից ֆինանսական շուկաների էությունը, տեսակները, գործառնությունները և կառուցվածքը, ինչպես նաև ֆինանսական ինստիտուտների՝ դեպոզիտարիաների, ինվեստիցիոն ընկերությունների և հաշվարկային կազմակերպությունների գործառնությունները: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողին ներկայացնել ֆինանսական ինստիտուտների և շուկաների ուսումնասիրման անհրաժեշտությունը, • բացատրել ֆինանսական շուկաների հիմնական տեսակների էությունը և գործունեության օրինաչափությունները, • ներկայացնել ֆինանսական ինստիտուտների տեսակները, • սահմանել ֆինանսական ածանցյալ գործիքները և բացատրել դրանց կիրառման կարևորությունը շուկայի զարգացման հարցում • ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից, • ուսանողներին զինել ֆինանսական շուկաներում առկա իրավիճակը հասկանալու, վերլուծելու, և կողմնորոշվելու կարողություններով:	
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Թվարկելու ֆինանսական շուկաների տեսակները: 2. Նկարագրելու ֆինանսական շուկաների գործարքների հիմնական ձևերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու ֆինանսական շուկայում տարբեր իրավիճակները և օրինաչափությունները: 2. Բացատրելու ֆինանսական ինստիտուտների դերը տնտեսությունում: 3. Հետազոտելու ֆինանսական շուկաներում կիրառվող գործիքների հնարավորությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 2. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:	
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Ա5. մեկնաբանելու ոչ բանկային ֆինանսական ոլորտին բնորոշ առանձնահատկությունները, Ա9. մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ4. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:	
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • նախադեպերի վերլուծություն • խմբային աշխատանք • անհատական աշխատանք:	
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների գնահատման համար իրականացվում է.	

• 1-ին ընթացիկ քննություն (գրավոր է՝ 5 միավոր առավելագույն արժեքով): Միավորի քայլը 0.5 է: • 2-րդ ընթացիկ քննություն (գրավոր է՝ 5 միավոր առավելագույն արժեքով): Միավորի քայլը 0.5 է: • Եզրափակիչ քննություն (բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով): Միավորների քայլը 0,5 է:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ֆինանսների էությունը և գործառնությունը: Թեմա 2. Ֆինանսական շուկաները տնտեսական համակարգում: Թեմա 3 Ֆինանսական ինստիտուտներ և գործիքներ: Թեմա 4. Փողի շուկա: Թեմա 5. Արժեթղթերի շուկա: Թեմա 6. Արժեթղթերի էությունը և տեսակները: Թեմա 7. Արժույթային շուկա: Հիմնական գրականության ցանկ. 1. Մնացականյան Հ., Ֆինանսական շուկաներ. Ուսումնական ձեռնարկ, Ե., 2006, 2. Խմբ. Լ. Բադալյան, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Եր. 2010 3. ՀՀ օրենքը «Արժեթղթերի շուկայի մասին», 2008 4. Т.В.Никитина, А.В. Финансовые рынки и финансово-кредитные институты, С-П, 2014 5. Frederic S. Mishkin, Apostolos Serletis, The economics of money, banking, and financial markets, Toronto, 2011 6. Roy E. Bailey, The Economics of Financial Markets, New York, 2005.

0201/B30	Տնտեսական իրավիճակների մոդելավորում	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում տնտեսագիտա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի, սկզբունքների և մեթոդների վերաբերյալ, տալ գիտելիքներ տնտեսության տարբեր ոլորտներում ու մակարդակներում մոդելավորման հնարավորությունների վերաբերյալ: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Թվարկելու տնտեսա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի հիմնարար սկզբունքները և մեթոդները: 2. Մեկնաբանելու տնտեսական տարբեր երևույթների և գործընթացների ուսումնասիրման համար կիրառվող հիմնական տնտեսա-մաթեմատիկական մոդելները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Տարբեր տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով ընտրելու և հիմնավորելու համապատասխան տնտեսա-գիտամաթեմատիկական մեթոդը և դրա կիրառման նպատակահարմարությունը: 2. Տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով մշակելու կոնկրետ տնտեսամաթեմատիկական մոդելներ և դրանց կիրառմամբ կատարելու համապատասխան հաշվարկներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան) 1. Կայացնելու որոշումներ կոնկրետ տնտեսական իրավիճակներում՝ ձեռքբերած գիտելիքների և հմտությունների հիման վրա: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթ(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա6.բացատրելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկա տնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները,		

ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • գործնական աշխատանք • ինքնուրույն, անհատական • խմբային աշխատանքներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր առավելագույն արժեքով: <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տնտեսագիտա-մաթեմատիկական մոդելի հասկացությունը, մոդելների դասակարգումը ու հիմնական տիպերը, մոդելավորման փուլերը: Շրջիկ գործակալի խնդիրը, բրուտի խնդիրը: Թեմա 2. Տնտեսական աճի մոդելներ: Տնտեսական աճի գործոնները: Տնտեսա-մաթեմատիկական մոդելների օրինակ ներ. Նեդ տեղերի խնդիրը Թեմա 3. Արտադրության գծային մոդելներ. Նվազագույն ծախսերով արտադրության գծային մոդելը, Նորմալ կերի խնդիրը, Գորգերի արտադրության խնդիրը: Ավտոբուսների հերթափոխի ծրագրավորման խնդիրը Թեմա 4. Դիսկրետ օպտիմալացման խնդիրներ: Երրկդմ գրաֆի առավելագույն զուգակցում: Տրանսպորտի խնդիրը, լուծումը պոտենցիալների եղանակով: Թեմա 5. Դինամիկ ծրագրման մոդելներ. Ուսապարկի խնդիրը, Ինքնաթիռի բեռնման մոդելը: Ամենակարճ երթուղու խնդիրը, Կարճագույն ճանապարհի խնդիրը: Թեմա 6. Ցանցային մոդելներ, ծրագրերի օրացուցային պլանավորման և կառավարման խնդիրը, Նկարների ցուցահանդեսի, շինարարական աշխատանքների ծրագրի ներկայացումը ցանցով: Թեմա 7. Պաշարների կառավարման մոդելներ. պաշարների կառավարման հիմնական մոդելը, արտադրական մատակարարումների մոդելը, պաշարների կառավարման դինամիկ մոդելը: Պարարտանյութի բաշխման խնդիրը Թեմա 8. Օպտիմալ կառավարման խնդիրը. օպտիմալ կառավարման մոդելը, շրջակա միջավայրի ազտոտումը վերահսկելու խնդիրը: Թափոնների նվազեցման խնդիրը Թեմա 10. Խաղային մոդելներ. երկմատրիցային խաղեր: Սիմետրիկ խաղեր: Մոդրա խաղը:		
Հիմնական գրականության ցանկ 1. Մ.Սահակյան, Հ.Սարգսյան, Ս.Սարգսյան, Ռ.Տոնոյան, Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ /Մաս 1. Գործույթների հետազոտում, կառավարման գիտություն: Երևան, 1997.-320 էջ: 2. Մ.Ս.Սահակյան, Ն.Ա.Բեկնազարյան, Հ.Յ.Հակոբյան, Խ.Վ.Քերոբյան, Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ/ Մաս 2. Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2001.-325 էջ: 3. Տնտեսական իրավիճակների մոդելավորում – Ուսումնա-մեթոդական ձեռնարկ: Սարգսյան Հ. և ուրիշներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009: 4. Хэмди А. Таха, Введение в исследование операций. Изд-во «Вильямс». 6-ое изд, Москва, Санкт-Петербург, 2001.		

0201/B31	Տնտեսագիտական մտքի պատմություն	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
4-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է օժանդակել ժամանակակից տնտեսագիտական սկզբունքների և հայեցակարգերի առավել համակողմանի ըմբռնմանը՝ դրանց ձևավորումը, զարգացումը և փոխներգործությունները ներկայացնելու ու վերլուծելու միջոցով: Նպաստել անհրաժեշտ տեսական հենքի ձևավորմանը, ժամանակակից տնտեսական հիմնահարցերին արդյունավետ լուծումներ		

գտնելու համար: Դասընտացի խնդիրներն են. • բացահայտել տնտեսական երևույթների և գործընթացների էությունը տարբեր տնտեսական դպրոցների տեսանկյունից, • ուսումնասիրել տնտեսական համակարգերի զարգացման օրինաչափությունները, հասարակության և տնտեսության էվոլյուցիայի փոխկապվածությունը:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու մարդկության կողմից մինչ այժմ ձևակերպված և ներկայումս գոյություն ունեցող տնտեսագիտական մեկնաբանությունները և տեսությունները: 2. Բնութագրելու տնտեսվարման խնդիրների լուծման և ճանաչողության խորացման ու ընդլայնման գոյություն ունեցող կապը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Զանազան տնտեսական իրավիճակներում ընտրելու արդյունավետ լուծումներ: 2. Կատարելու արդյունավետ ընտրություն տնտեսական կացությունը և վարվող տնտեսական քաղաքականությունը գնահատող գործիքակազմից: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. յուրացնելու ու վերիմաստավորելու միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական այլ դասընթացների, ինպես նաև ճյուղային ու գործառնական բնույթի տեսական, գործնական և հատուկ դասընթացների նյութը:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Ա8.մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/, • սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցադրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/, - ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Անցկացվում է եզրափակիչ քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է չորս հարց՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը՝ 0.5:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տնտեսագիտական մտքի պատմության ներածություն: Թեմա 2. Տնտեսագիտական միտքը Հին Աշխարհում: Թեմա 3. Տնտեսագիտական պատկերացումները Միջին Դարերում: Թեմա 4. Կապիտալիզմի սկզբնավորման փուլի տնտեսագիտական պատկերացումները: Թեմա 5. Դասական քաղաքատնտեսության սկիզբն Անգլիայում և Ֆրանսիայում: Թեմա 6. Ադամ Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրությունը աշխատությունը: Թեմա 7. Շուկայական տնտեսության ինքնակարգավորման վարկածը, Ժ.Բ.Սեյ, Թ.Ռ.Մալթուս: Թեմա 8. Դավիթ Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը: Թեմա 9. Զոն Ստյուարտ Միլը և նրա «Քաղաքատնտեսության

սկզբունքներ» աշխատությունը: **Թեմա 10.** Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունը: **Թեմա 11.** Պատմական ուղղությունը տնտեսագիտության մեջ: **Թեմա 12.** Մարժինալիզմը. սահմանային օգտակարության տեսությունը: **Թեմա 13.** Ալֆրեդ Մարշալի տնտեսագիտական տեսությունը: **Թեմա 14.** Ինստիտուցիոնալիզմ: **Թեմա 15.** Քեյնսյան տեսությունը: **Թեմա 16.** Նոր պահպանողական տեսությունները:

Հիմնական գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ /ԵՊՀ Տնտեսագիտության ֆակ./, «Աստղիկ» հրտարակչություն, 2009 թ.:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание – Москва, “Дело Лтд” 1994.
3. Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ. / Գ.Ս. Գալստյան, Հ.Գ. Մարգարյան: - Եր.: ԵՊՀ հրատ., 2016.-136 էջ:
4. Жамс Э., История экономической мысли XX века, Москва, «ИЛ» 1959г.
5. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер.с англ., Москва, «Прогресс» 1968г.

0201/B32	Վիճակագրություն	5 կրեդիտ
5 ժամ/շաբ.	45/30/0	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ապագա մասնագետների մոտ ժամանակակից տնտեսության պահանջներին համապատասխան վիճակագրական տեսական գիտելիքների և պրակտիկ ունակությունների ձևավորում, տնտեսական երևույթների և գործընթացների վերլուծության համար անհրաժեշտ որակավորման ձեռքբերում: Դասընթացի խնդիրներն են. • տնտեսական երևույթների և գործընթացների միտումների և օրինաչափությունների ուսումնասիրման համար վիճակագրական ինֆորմացիայի հավաքման, մշակման, ընդհանրացման և վերլուծության ժամանակակից մեթոդների համալիր յուրացումը ուսանողների կողմից, • հիմնավորված կառավարչական որոշումների ընդունման համար վիճակագրական և տնտեսական գործընթացների կանխատեսման մեթոդների կիրառումը:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Թվարկելու վիճակագրության խնդիրները՝ շուկայական տնտեսության պայմաններում: 2. Ներկայացնելու ազգային և արտասահմանյան վիճակագրական ծառայությունների ժամանակակից կազմակերպման սկզբունքները: 3. Բացատրելու վիճակագրության հասկացությունները, կատեգորիաները, տվյալների հավաքման, մշակման և վերլուծության մեթոդները: 4. Բացատրելու վիճակագրական կանխատեսման մեթոդները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 5. Կազմակերպելու և անցկացնելու վիճակագրական դիտումներ: 6. Կառուցելու վիճակագրական գրաֆիկներ և աղյուսակներ: 7. Հաշվարկելու և մեկնաբանելու վիճակագրական ցուցանիշներ: 8. Ձևակերպելու անցկացրած վերլուծությունից բխող եզրակացություններ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կայացնելու որոշումներ կոնկրետ տնտեսական իրավիճակներում՝ ձեռքբերած գիտելիքների և հմտությունների հիման վրա:		

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա9.մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, Ա2.բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը, Բ2.որոշումների կայացման համար պատրաստելու համապատասխան անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ8.պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ, Գ4.պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն • սեմինար • ռեֆերատ • անհատական և խմբային առաջադրանքներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար Նախատեսված 2 ընթացիկ քննություններից /գրավոր/ յուրաքանչյուրը գնահատվում են՝ առավելագույնը 5 միավոր: Եզրափակիչ քննությունը /Բանավոր հարցում/ գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Վիճակագրության առարկան, մեթոդը, խնդիրները և կազմակերպումը: Թեմա 2. Վիճակագրական դիտարկումներ: Թեմա 3. Վիճակագրական ամփոփում, աղյուսակներ, գրաֆիկական մեթոդը վիճակագրության մեջ, խմբավորումներ: Թեմա 4. Ընդհանրացնող վիճակագրական ցուցանիշներ: Թեմա 5. Միջին մեծություններ: Թեմա 6. Վարիացիայի ցուցանիշները: Թեմա 7. Ընտրանքային դիտարկում: Թեմա 8. Դինամիկայի շարքեր, դրանց վերլուծությունը: Թեմա 9. Ինդեքսներ: Թեմա 10. Փոխկապվածությունների վիճակագրական ուսումնասիրությունը:		
Հիմնական գրականության ցանկ 1. Պետրոսյան Ն., Վիճակագրություն, Տնտեսագետ, Երևան, 2013 2. Հ.Հովհաննիսյան, Մ.Ֆահրադյան, Սոցիալ-տնտեսական վիճակագրություն: Ուսումնական ձեռնարկ, Տնտեսագետ, Երևան, 2000 3. Р.А.Шмойлова, В.Г.Минашкин, Н.А., Теория статистики՝ Финансы и статистика, Москва. 2008 4. Елисеева И.И., Юзбашев М.М., Общая теория статистики: Учебник / Под ред. чл.-корр. РАН И.И. Елисеевой.-М.: Финансы и статистика, 1995		

0104/B33	Համակարգչային պրակտիկում	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/30/0	
4-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական գործընթացների մոդելավորման և վերլուծության հմտություններ: Դասընթացի խնդիրներն են. • զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները տնտեսագիտական մոդելների MS Excel միջավայրում վերլուծության համար, • ուսանողներին ունակ դարձնել կատարել ֆինանսական, վիճակագրական և ցանցային մոդելների վերլուծություն MS Excel միջավայրում:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու MS Excel և MS Access ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական գործընթացների մոդելավորման և վերլուծության սկզբունքները և դրանց կիրառությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ		

1. Լուծելու մասնագիտական խնդիրներ MS Excel և MS Access կիրառական փաթեթներով: 2. Կատարելու վերլուծություններ, պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ): 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 3. Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Բ8.պատրաստելու և ներկայացնելու ֆինանսական համակարգին առնչվող տարատեսակ հաշվետվություններ, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ4.պատրաստելու գեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառելու գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • գործնական աշխատանք • ինքնուրույն աշխատանք • անհատակա աշխատանք • խմբային աշխատանքներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգումներն անցկացվում են համակարգիչներով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ֆինանսական հաշվարկների, վիճակագրական և ֆինանսական վերլուծությունների իրականացումը MS Excel միջավայրում: Թեմա 2. Գծային և ոչ գծային ծրագրավորման, խաղերի տեսության խնդիրների լուծումը MS Excel միջավայրում: Թեմա 3. MS Excel-ի հնարավորությունները դինամիկ, ցանցային մոդելների վերլուծության համար: Թեմա 4. Տվյալների բազաների նախագծում և մշակում MS Access փաթեթով:
Հիմնական գրականության ցանկ 1. Բունիաթյան Մ., Ղուկասյան Գ., Համակարգչային պրակտիկում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2016, հեղ. հր., 120 էջ 2. Леоненков А., Решение задач оптимизации в среде MS Excel. «БХВ-Петербург», Санкт-Петербург, 2005. 704 стр. 3. А.Ф.Горшков и др. Компьютерное моделирование менеджмента, Москва, 2004, 525 стр. 4. Бекаревич Ю., Пушкина А., Создание реляционной базы данных и запросов. Microsoft Access 2007. Учебное пособие. Изд-во Санкт-Петербургского университета, Санкт-Петербург, 2010. 137с. 5. Юрченко Т.В., Информационные технологии в экономике. Решение экономических задач средствами MS EXCEL 2007: Учебное пособие. ННГАСУ, 2010. 132 с. 6. Гобарева Я.Л., Городецкая О.Ю., Золотарюк А.В., Технология экономических расчетов Средствами Excel. «Новейшая желтая методичка, Москва. 2006. 143 с. 7. Соловьев В.И. Методы оптимальных решений, учебное пособие., М.: Финансовый университет, 2012. 364 с. 8. Степанов А.Г., Разработка управленческого решения средствами пакета Excel: Учеб. пособие, 2001.

172 ս.
9. Л.А.Анеликова Лабораторные работы по Excel, М., 2006.
10. Практикум по экономической информатике. Часть 1. Под ред. Шуремова Е.Л., М: Перспектива 2000
11. Златопольский Д.М., 1700 заданий по Microsoft Excel. БХВ-Петербург, 2003-544 с.

0201/B34	Պետական ֆինանսներ	5 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել պետական ֆինանսական համակարգի արդյունավետ գործունեության հիմնական նախադրյալները: Դասընթացի խնդիրներն են. • ներկայացնել պետական ֆինանսական համակարգի կառուցվածքը, • ուսումնասիրել առանձին օղակների գործունեության առանձնահատկությունները, • ուսումնասիրել պետական ֆինանսների կենտրոնացման և օգտագործման հիմնական ուղղությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները: 2. Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտագործելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) հայթայթած տեղեկատվությունը, 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 3. Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ս8.մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ2.որոշումների կայացման համար պատրաստելու համապատասխան անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ4.կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Բ8.պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • նախադեպերի վերլուծություն • խմբային աշխատանք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից / գրավոր/ յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: Եզրափակիչ քննությունը /բանավոր հարցում/ գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.		

Թեմա 1. Պետական ֆինանսների էությունը: **Թեմա 2.** Բյուջետային համակարգը: **Թեմա 3.** Պետական բյուջեի եկամուտները և ծախսերը: **Թեմա 4.** Տեղական ֆինանսներ: **Թեմա 5.** Պետական ֆինանսական վերահսկողություն:

Հիմնական գրականության ցանկ

1. Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Սաֆարյան Ա. «Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», Գիրք. Երևան 2004թ. 158 էջ
2. Պետության դերը տնտեսական համակարգում, «21-րդ ԴԱԴ», թիվ 4 (18), 2007թ. Աշոտ Մարկոսյան, Դավիթ Աղաջանյան,
3. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսներ, Կարճիկյան Վիկտոր, Բայադյան Աշոտ, Publisher: Երևան : Լիմուշ, 2010 Description: 87 էջ
4. Папело В., Голошевская А., Государственные и муниципальные финансы: учеб.пособие. Новосибирск 2014г. 203стр.
5. Государственные и муниципальные финансы: учеб.пособие / под ред. Г.Б.Поляка.-3-е изд., перераб. и доп. -М.: ЮНИТИ- ДАНА, 2014г. 375 стр.
6. ՀՀ օրենսդրություն, www. arils.am
7. Финансы: учебник / под ред. Г.Б.Поляка.-4-е изд., перераб. и доп.-М.: ЮНИТИ-ДАНА, 2013г.735 стр.
8. Кадомцева С. Государственные финансы: учеб.пособие. М.: 2009г. 352 стр.

0201/B35	Էկոնոմետրիկա- 1	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
4-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է տալ տնտեսագիտական հետազոտություն ներում քանակական և որակական էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ: Ներկայացնել էկոնոմետրիկ գործիքներ և տեխնիկաներ, որոնք թույլ կտան գնահատել տնտեսական մոդելների որակը: Դասընթացի խնդիրներն են. • զարգացնել ժամանակակից մաթեմատիկական մտածողություն • ծանոթացնել տնտեսական-մաթեմատիկական և մաթեմատիկական-վիճակագրական մոդելներին և մեթոդներին:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Գնահատելու համակարգչային փաթեթների կիրառությամբ իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը: 2. Ներկայացնելու տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելու վիճակագրական մոտեցումները և էկոնոմետրիկ մոդելների տեսակները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը՝ կիրառելով համակարգչային փաթեթներ: 2. Ստուգելու վիճակագրական մեթոդների օգնությամբ մոդելների համապատասխանության և պարամետրերի վերաբերյալ տարբեր վարկածներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Լուծելու մի շարք գործնական տնտեսագիտական խնդիրներ էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ: 2. Տարբեր աղբյուրներից հայթայթելու տեղեկատվություն և դրանց հիման վրա կատարելու տնտեսագիտական վերլուծություններ:		

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Բ4. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Բ7. կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • գործնական համակարգչային դասընթացներ • խմբային աշխատանքներ (Stata փաթեթի կիրառմամբ),		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. • 1-ին ընթացիկ ստուգումը (գրավոր հիմունքով, 10 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5): • 2-րդ ընթացիկ ստուգումը (գրավոր հիմունքով, 10 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5):		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ Թեմա 1. Պարզ ռեգրեսիոն մոդելներ: Մի շարք փոփոխականներով ռեգրեսիոն մոդելներ: Թեմա 2. Մի շարք փոփոխականներով ռեգրեսիայի որոշ ասպեկտներ: Թեմա 3. Մնացորդների վերլուծություն: Մնացորդների կորելացիա և բազմադիսպերսիայնություն (հետերոսկեդաստիկություն): Թեմա 4. Սպեցիֆիկացիայի սխալներ և բաց թողնված փոփոխականի շեղում: Թեմա 5. Գործիքային փոփոխականներ: Երկքայլ փոքրագույն քառակուսիների մեթոդը: Միաժամանակյա հավասարումների համակարգեր:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Wooldridge J.M., Introductory Econometrics: A Modern Approach, South-Western Cengage Learning, 2012 2. Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика, Москва, изд. “Дело”. 2004 3. Кристофер Доугерти, Введение в эконометрику, М: ИНФРА-М, 1999 4. Damodar Gujarati, Basic Econometrics, The McGraw-Hill Companies, 2004 5. Wooldridge, J.M., Econometric analysis of cross section and panel data. MIT press. 2010 6. Baltagi, B., Econometric analysis of panel data. John Wiley & Sons. 2008		

0201/B40	Էկոնոմետրիկա - 2	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
5-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է զարգացնել ժամանակային շարքեր կիրառող ոլորտներում էմպիրիկ հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունները: Դասընթացի խնդիրներն են. • ուսումնասիրել ժամանակային շարքերի բովանդակությունը և դրանց կիրառման ոլորտները, • ներկայացնել էկոնոմետրիկ գործիքներ և տեխնիկաներ, որոնք թույլ կտան գնահատել ժամանակային շարքեր կիրառող տնտեսական մոդելների որակը:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելու վիճակագրական		

մոտեցումները և էկոնոմետրիկ մոդելների տեսակները: 2. Ստուգելու վիճակագրական մեթոդների օգնությամբ մոդելների համապատասխանության և պարամետրերի վերաբերյալ տարբեր վարկածներ: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու համակարգչային փաթեթների կիրառությամբ իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը: 2. Կատարելու evIEWS փաթեթի միջոցով ժամանակային շարքերի վերլուծություն և կանխատեսում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Լուծելու էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ մի շարք գործնական տնտեսագիտական խնդիրներ: Հայթայթելու տարբեր աղբյուրներից տեղեկատվություն և դրանց հիման վրա կատարել տնտեսագիտական վերլուծություններ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ3.գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Բ4.կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպա-տակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրնե-րից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • գործնական համակարգչային դասընթացներ • խմբային աշխատանք (EvIEWS փաթեթի) կիրառմամբ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների գնահատման համար իրականացվում է. • 1-ին ընթացիկ քննություն (գրավոր, 5 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5): • 2-րդ ընթացիկ քննություն (գրավոր, 5 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5): • եզրափակիչ քննություն (բանավոր, 10 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5):		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Առաջին կարգի տարբերություն և գործողություններ լազերի հետ: Տարբերակային հավասարումներ: Թեմա 2. Ստացիոնար ARMA պրոցեսներ: Թեմա 3. Կանխատեսում: Թեմա 4. Ոչ ստացիոնար ժամանակային շարքեր: Միավոր արմատի խնդիրը: Թեմա 5. Ռեգրեսիվ դինամիկ մոդելներ: Թեմա 6. Վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելներ և կոինտեգրացիոն մոդելներ: Միալի ճշգրտման մոդելը: Պատճառականություն: Թեմա 7. Պանելային տվյալների գծային մոդելներ: Ֆիքսված և պատահական էֆեկտներով մոդելներ: Հաուսմանի թեստը:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Hamilton J.D., Time series analysis (Vol. 2). Princeton: Princeton university press, 1994 2. Helmut Lütkepohl, New Introduction to Multiple Time Series Analysis, Library of Congress Control Number: 2005, 927322 3. Канторович Г.Г., Лекции по курсу «Анализ временных рядов». Экономический журнал ВШЭ, 2003 4. Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика, Москва, изд. «Дело». 2004		

0201/B36	Տնտեսական սոցիոլոգիա	4 կրեդիտ
3 ժամ/շաբ.	30/0/15	

4-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տնտեսությունում տեղի ունեցող սոցիալական գործընթացներին, երևույթներին և հարաբերություններին, տնտեսագիտական համակարգի վրա դրանց ազդեցությանը, ինչպես նաև սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողին ուսուցանել դիսցիպլինի ուսումնասիրության առարկան և մեթոդները, • ձևավորել իմացություն սոցիալական պետությունը և արդարության սկզբունքները, • ծանոթացնել սոցիալական անհավասարությունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունները • ձևավորել տնտեսագիտական մտածողություն սոցիալական շերտավորման հիմնախնդիրները տնտեսությունում, • ծանոթացնել եկամուտների անհավասարությունը և այն պայմանվորող գործոնները • կենսամակարդակի և կյանքի որակի ցուցանիշները, • ճիշտ պատկերացում ունենան աղքատության վերաբերյալ, նրա դրսևորման ձևերի և չափման եղանակների • ծանոթացնել գործազրկության և զբաղվածության սոցիալ- տնտեսական ասպեկտներին, • ուսանողին ուսուցանել աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքերը, • ծանոթացնել սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում:	
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Մատնանշելու տնտեսական սոցիոլոգիայի առանձնահատկությունները: 2. Սահմանելու և բացատրել սոցիալական պետություն հասկացությունը: 3. Մատնանշելու աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու սոցիոլոգիական մեթոդները տնտեսագիտական հետազոտություններում: 2. Համակարգելու սոցիալական անհավասարությունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունը: 3. Վերլուծելու և համեմատելու գործազրկության տեսակները՝ կախված իրավիճակից: 4. Մատնանշելու աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքերը: 5. Ներկայացնելու սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում՝ կազմելով հարցաթերթիկներ: 2. Օգտագործելու մասնագիտական լեզուն: 3. Վերլուծելու հարցման արդյունքները:	
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:	
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • խոսքային մեթոդներ /դասախոսություն, բացատրում, պատմում, երկխոսություն/, • գննական մեթոդներ /դիդակտիկ նյութերի ցուցադրում և այլն/, • տրամաբանական մեթոդներ, • ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ, • համագործակցային ուսուցման մեթոդներ,	

• խմբային աշխատանքի մեթոդներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված է բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է չորս հարց՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը՝ 0.5:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տնտեսագիտական սոցիոլոգիայի առարկան և մեթոդը: Թեմա 2. Սոցիոլոգիայի մեթոդները և հետազոտությունների կազմակերպումը: Թեմա 3. Սոցիալական պետությունը և արդարության սկզբունքները: Թեմա 4. Սոցիալական անհավասարությունը և հասարակական դասերի ստրատիֆիկացիոն հիմնական տեսությունները: Թեմա 5. Եկամուտների անհավասարությունը և այն պայմանավորող գործոնները: Թեմա 6. Կենսամակարդակի և կյանքի որակի ցուցանիշները: Թեմա 7. Աղքատության պատկերը, դրսևորման ձևերը և չափման եղանակները: Թեմա 8. Գործազրկության և զբաղվածության սոցիալ-տնտեսական ասպեկտները: Թեմա 9. Աշխատանքի սոցիալական կազմակերպման հիմքերը: Թեմա 10. Սոցիալական քաղաքականության էությունը, առանձնահատկությունները ՀՀ-ում:
Հիմնական գրականության ցանկ. 1. В.В.Радаев, «Экономическая социология», Москва, 2005 г. 2. Г.Н.Соколов, « Экономическая социология», Москва, 2009 г. 3. Е.М.Бабосов, «Экономическая социология», Москва, 2008 г. 4. В.И.Верховин, «Экономическая социология», Москва, 2010 г. 5. О.В.Кобяк, «Экономико-социологический словарь», Москва, 2002

0201/B37	Միջազգային տնտեսագիտություն	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
5-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է՝ նպաստել անհրաժեշտ տեսական հիմքի ձևավորմանը՝ ժամանակակից արտաքին տնտեսական հիմնահարցերին արդյունավետ լուծումներ գտնելու համար: Օժանդակել միջազգային տնտեսագիտության ժամանակակից սկզբունքների և հայեցակարգերի համակողմանի ըմբռնմանը: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ համաշխարհային տնտեսության զարգացման վերաբերյալ, ինչը հիմք կհանդիսանա միջազգային ուղղվածությամբ այնպիսի դասընթացների յուրացման համար, որոնք ավելի խորն են ուսումնասիրում արտաքին տնտեսական կապերի համակարգը և ունեն կիրառական նշանակություն:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու արտաքին առևտրի տեսությունների ժամանակակից մեկնաբանությունները և առանձնահատկությունները: 2. Վերլուծելու առևտրային քաղաքականության հնարավոր ազդեցությունը տնտեսության վրա: 3. Նկարագրելու վճարային հաշվեկշռի և փոխարժեքի կարգավորման ուղիներն ու դերը տնտեսության կայունության խնդրում: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու համաշխարհային տնտեսական զարգացումների հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: 2. Կանխատեսելու ՀՀ արտաքին տնտեսական և արժույթային քաղաքականության ներտնտեսական հետևանքները: 3. Հաշվարկելու տնտեսական խմբավորումներում ՀՀ մասնակցության հավանական հետևանքները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Վերլուծելու ժամանակակից արտաքին տնտեսական հիմնախնդիրները, քննարկել դրանց		

լուծման այլընտրանքները: 2. Կատարելու հետազոտական աշխատանք: 3. Մասնակցելու գիտական բանավեճի:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Ա8.մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ4.կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ5.գնահատելու ազգային և համամարդկային արժեքները և նպաստելու դրանց տարածմանը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություն. տեսության և քաղաքականության բացատրություն, • սեմինար պարապմունք. տնտեսական իրավիճակների ու տնտեսական քաղաքականության վերլուծություն, • խնդիրների լուծում, • ուսանողների կողմից վերլուծական նյութերի պատրաստում, ներկայացում և քննարկում:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված է. • 1-ին ընթացիկ քննություն. գրավոր՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը՝ 0.5: • 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը՝ 0.5: • եզրափակիչ քննություն. բանավոր՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը՝ 0.5:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Արտաքին առևտրի տեսությունները: Թեմա 2. Արտաքին առևտրի ազդեցությունը երկրի բարեկեցության վրա: Թեմա 3. Արտաքին առևտրի և տնտեսական աճի առնչությունը: Թեմա 4. Ռեսուրսների միջազգային շարժը: Թեմա 5. Առևտրային քաղաքականության գործիքները և ազդեցությունը տնտեսության վրա: Թեմա 6. Վճարային հաշվեկշիռը: Թեմա 7. Արժույթի գլոբալ շուկան: Թեմա 8. Առևտրային հաշվեկշռի կարգավորումը: Թեմա 9. Փոխարժեքի որոշումը: Թեմա 10. Բաց տնտեսության մակրոտնտեսագիտություն: Թեմա 11. Միջազգային արժույթային համակարգը: Թեմա 12. Գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամերի պատճառները և հետևանքները:		
Հիմնական գրականության ցանկ 1. Թորոսյան Թ., «Միջազգային տնտեսագիտություն», Երևան, 2009թ.: 2. Հասստեդ Ս., Մ.Մելլին, «Միջազգային տնտեսագիտություն», Երևան, 1999թ.: 3. Yarbrough B., R. Yarbrough, «The World Economy: Trade and Finance», Harcourt College Publishers, 2000: 4. Krugman P., M. Obstfeld, M. Melitz, «International Economics: Theory and Policy», Pearson, 2014: 5. Salvatore D., «International Economics», John Wiley & Sons, 2016: 6. Киреев А., Международная экономика. М.: Международные отношения, 2006:		

0201/B39	Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա	3 կրեդիտ
3 ժամ/շաբ.	30/0/15	
5-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ խորացված և համակարգված գիտելիքներ		

ծառայությունների ոլորտի՝ որպես ժամանակակից տնտեսության առաջատար ոլորտի արդի հիմնախնդիրների և զարգացման միտումների շուրջ: Դասընթացը ներառում է նաև ծառայությունների ոլորտի առանձին ճյուղերում կառավարման, կազմակերպման և ֆինանսավորման հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները: Դասընթացի խնդիրներն են. • ներկայացնել ծառայությունների ոլորտի էությանը, կառուցվածքը և գործառնական օրինաչափությունները, • ուսումնասիրել ծառայությունների առանձնահատկությունները և դասակարգումը, • ուսումնասիրել ծառայությունների շուկան գլոբալիզացիայի պայմաններում:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները: 2. Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարան ներգիտական հոդվածներ, հաշվետվություններ) կիրառելու տեսական գիտելիքները գործնականում: 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Ա7. բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Ա8. մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ1. դասակարգելու ռիսկերը և կայացնելու ֆինանսական որոշումներ, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • սեմինար պարապմունքներ • գործնական առաջադրանքներ • ինքնուրույն աշխատանքի կատարում և ներկայացում • նախադեպերի վերլուծություն:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված է բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով, հարցատոմսը պարունակում է չորս հարց՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը՝ 0.5:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի ներածություն: Թեմա 2. Ծառայություններն ու ոլորտը սոցիալ-տնտեսական համակարգում: Ծառայությունների հատվածը ՀՀ-ում: Թեմա 3. Ծառայության հասկացությունը: Ծառայության մատուցման տարրերը: Թեմա 4. Ծառայությունների դասակարգումը: Թեմա 5. Ծառայության որակ: Թեմա 6. Ծառայությունների շուկա: Թեմա 7. Ծառայությունների գլոբալացումը:

Ծառայությունների միջազգային առևտրի ձևերը և արգելքները: **Թեմա 8.** Աշխատանքային ռեսուրսների կառավարումը ծառայությունների ոլորտում: **Թեմա 9.** Պաշարների կառավարումը ծառայությունների ոլորտում: **Թեմա 10.** Կրթությունը որպես սոցիալական ոլորտի ենթահամակարգ: **Թեմա 11.** Առողջապահությունը որպես սոցիալական ոլորտի ենթահամակարգ: **Թեմա 12.** Մշակույթի ոլորտը ազգային տնտեսության համակարգում: **Թեմա 13.** Առևտուրը որպես ազգային տնտեսության ճյուղ: **Թեմա 14.** Սպորտը և ֆիզիկական կուլտուրան որպես ազգային տնտեսության ճյուղ: **Թեմա 15.** Զբոսաշրջություն:

Հիմնական գրականության ցանկ

1. Խաչատրյան Ն., Գասպարյան Կ., Ծառայությունների էկոնոմիկա, Երևան, 2013:
2. Сфера услуг. Менеджмент. Под ред. Т. Бурменко. Москва, 2017.
3. Бурменко Т.Д., Даниленко Н.Н., Туренко Т.А. Сфера услуг. Экономика. Москва, 2008.
4. Хаксевер К., Рендер Б., Рассел Р., Мердик Р. Управление и организация в сфере услуг. Санкт-Петербург, 2003.
5. Шишкин С. Экономика социальной сферы. Москва, 2003.
6. Дюмулен И. Международная торговля услугами. Москва, 2003.

0201/B38	Միկրոտնտեսագիտություն	5 կրեդիտ
5 ժամ/շաբ.	45/0/30	
5-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել տարբեր մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ ուսումնասիրել տնտեսվարող սուբյեկտների վարքագծային առանձնահատկությունները, պատկերացում կազմել հիմնական միկրոտնտեսական օրենքների և դրանց միջև գոյություն ունեցող օրինաչափությունների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն. • ուսանողներին ներկայացնել հիմնարար միկրոտնտեսագիտական օրենքները, հասկացությունները և ցուցանիշները, • ուսանողներին ծանոթացնել արտադրողի և սպառողի տեսությունների, շուկայական հավասարակշռության մոդելների, շուկայի բացերի և դրանց կարգավորման եղանակների հետ, • ուսանողներին զինել միկրոտնտեսագիտական ցուցանիշները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու կարողություններով, • ուսանողներին սովորեցնել օգտվել մասնագիտական գրականությունից և վիճակագրական տվյալների աղբյուրներից:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու հիմնական միկրոտնտեսական հասկացությունները, օրենքները և դրանց միջև դրսևորվող օրինաչափությունները: 2. Ներկայացնելու սպառողի և արտադրողի տեսությունները, նրանց վարքագծի օպտիմալացման պայմանները և դրանց վրա ազդող գործոնները: 3. Մեկնաբանելու շուկայական հավասարակշռության մոդելները, շուկայի բացերը (հանրային բարիքներ, արտաքին արդյունքներ, տեղեկատվական ասիմետրիաներ ու մոնոպոլիաներ) և դրանց կարգավորման եղանակները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերլուծելու տիպային տնտեսա-մաթեմատիկական իրավիճակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում: 2. Կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք: 3. Ստեղծագործելու:		

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա8.մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները: Բ5.գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատել STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • թեստային վարժություններ և խնդիրների լուծում, • բանավեճեր, դերային խաղեր և իրավիճակային սցենարների քննարկումներ, • հետազոտական բնույթի թիմային աշխատանքներ, • տնային առաջադրանքներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքները գնահատելու համար իրականացվում են. • 1-ին ընթացիկ քննություն [գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, 5 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5]. • 2-րդ ընթացիկ քննություն [գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, 5 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5]. • Եզրափակիչ քննություն [բանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, 10 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5].		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Սպառման տեսության հիմունքները: Թեմա 2. Սպառողի օգտակարության մաքսիմալացման խնդիրը: Թեմա 3 Օգտակարության մաքսիմալացման երկակի խնդիրը: Թեմա 4 □ Եկամտի և փոխարինման էֆֆեկտները: Թեմա 5. Սպառողի բարեկությունը բնութագրող ցուցանիշները: Թեմա 6. Սպառողի վարքագիծը էնդոգեն եկամտի պայմաններում: Շուկայական պահանջարկ: Թեմա 7. Արտադրողի տեսության հիմունքները: Թեմա 8. Արտադրության ծավալի և գնի որոշումը տարբեր շուկայական կառուցվածքների դեպքում: Թեմա 9. Ընդհանուր հավասարակշռության տեսություն: Թեմա 10. Շուկայի բացերը և դրանց կարգավորումը:		
Հիմնական գրականության ցանկ 1. X.P.Вэриан, Микроэкономика. Промежуточный уровень, Москва, 1997 2. Тарасевич Л.С., Гребенников П. И., Леусский А. И. Макроэкономика. Санкт-Петербург, 2003 3. Geoffrey A.J. and Philip J.R, Advanced Microeconomic Theory, 3rd Edition, Pearson Education Limited, New York, 2011 4. Mas-Colell A. and Whinston M., Microeconomic Theory, Oxford Univeristy Press, Oxford, 1995 5. Barro R., Macroeconomics: A Modern Approach, South Western College Pub., 2007 6. Silberberg E. and Wing S., The Structure of Economics, McGraw Hill, New York, 2001		

0201/B41	Հաշվապահական հաշվառում-1	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
5-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվառման կարևորության, մեթոդի տարրերի և իրականացման սկզբունքների մասին: Պարզաբանել տնտեսական, հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվապահությունների առանձնահատկությունները, կազմակերպման ձևերը: Ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ		

հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ: Դասընթացի խնդիրներն են. - մեկնաբանել ուսանողներին հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը, - ուսանողներին բացատրել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների գործառնությունները, խնդիրները և առանձնահատկությունները, - ուսուցանել ուսանողներին օգտվել հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելիս, - ուսանողներին զինել հաշվապահական փաստաթղթեր լրացնելու և ստուգելու, հաշվապահական խնդիրներ լուծելու, գործառնությունների համար հաշվապահական ձևակերպումներ գրելու կարողություններով:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - Սահմանելու և բացատրելու հաշվապահական հաշվառման առարկան, մեթոդը, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը: - Բացատրելու ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների առանձնահատկությունները, ֆինանսական հաշվառման գործառնությունները, խնդիրները: բ. գործնական մասնագիտական կարողություններ - Մեկնաբանելու դասընթացի սահմաններում նախատեսված մասնագիտական տերմինները: - Աշխատելու հաշվային պլանով, գործառնությունների համար գրել հաշվապահական ձևակերպումներ, լրացնել հաշվապահական փաստաթղթեր, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Աշխատելու թիմում: - Շփվելու մասնագիտական լեզվով: - Անհայտ իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□ Ա4.ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը, Ա9.մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, Բ2.պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - դասախոսություններ - սեմինարներ, քննարկումներ և բանավեճեր - խմբային աշխատանքներ - ռեֆերատներ - անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումները անց է կացվում բանավոր և գրավոր, գնահատվում են՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից Թեմա 1. Հաշվապահական հաշվառման առարկան և մեթոդը: Թեմա 2. Հաշվապահական հաշվեկշիռ /ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն/ և հաշիվներ: Կրկնակի գրանցում: Թեմա 3.

Գնահատում և կալկուլյացիա: Փաստաթղթավորում և գույքագրում: **Թեմա 4.** Հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը, հաշվային պլան: **Թեմա 5.** Հաշվապահական հաշվառման տեսակները, սկզբունքները, կարգավորումը:

Հիմնական գրականության ցանկ
1. «Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքը, 2002թ. 2. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան եվ դրա կիրառման հրահանգ, 2012 3. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, 2012: 4. Ա.Զ.Սարգսյան, Ռ.Պ.Համբարձումյան, Ա.Մ.Մարջանյան, Ն.Ս.Օգանեզովա և ուրիշներ, /Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ/, Երևան, Տնտեսագետ 2014: 5. Թ.Մովսիսյան, Հաշվապահական հաշվառում, Երևան, 2015 6. Կ.Զուրաբյան, Ն.Գասպարյան, Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ/, Երևան, ՀՈՒՄԿ, ԵՊՀ տպագրատուն, 2011 7. Ֆինանսական հաշվառման հիմունքներ, Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Երևան 2012

0201/B45	Հաշվապահական հաշվառում-2	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվառման կարևորության, մեթոդի տարրերի և իրականացման սկզբունքների մասին: Պարզաբանել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվառման առանձնահատկությունները, իրականացման ձևերը: Ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ: Դասընթացի խնդիրներն են. • մեկնաբանել ուսանողներին կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի հաշվառման մեխանիզմները, • ուսանողներին բացատրել եկամուտների և ծախսերի դասակարգումը և հաշվառումը, • ուսուցանել ուսանողներին օգտվել հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելիս, • ուսանողներին զինել հաշվապահական փաստաթղթեր լրացնելու և ստուգելու, հաշվապահական խնդիրներ լուծելու, գործառնությունների համար հաշվապահական ձևակերպումներ գրելու կարողություններով:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու, մեկնաբանելու, հաշվառելու կազմակերպության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը: 2. Մեկնաբանելու դասընթացի սահմաններում նախատեսված մասնագիտական տերմինները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Աշխատելու հաշվային պլանով, գործառնությունների համար գրել հաշվապահական ձևակերպումներ, լուծելու հաշվապահական խնդիրներ,, լրացնելու և ստուգելու հաշվապահական փաստաթղթեր: 2. Օգտվելու հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելու: 3. Տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից:		

2. Աշխատելու թիմում, շփվելու մասնագիտական լեզվով: 3. Անհայտ իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու, կատարելու առաջարկություններ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□ Ա4. ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը, Ա9. մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, Բ7. կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Բ8. պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվու թյուններ, Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • նախադեպերի վերլուծություն, • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր, • խմբային աշխատանքներ, • ռեֆերատներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է՝ առավելագույնը 5 միավոր: Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից Թեմա 1. Կազմակերպության ակտիվների հաշվառում Թեմա 2. Կազմակերպության պարտավորությունների հաշվառումը: Թեմա 3. Եկամուտների և ծախսերի հաշվառումը: Տնտեսավարման ֆինանսական հետևանքների ձևավորումը և հաշվառումը: Թեմա 4. Սեփական կապիտալի հաշվառումը: Թեմա 5. Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, ներկայացման կարգը և փոխադարձ կապը:		
Հիմնական գրականության ցանկ 1. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, 2002թ. 2. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան եվ դրա կիրառման հրահանգ, 2012 3. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, 2012: 4. ՀՀ Հարկային օրենսգիրք 2016թ. 5. Ա.Զ.Սարգսյան, Ռ.Պ.Համբարձումյան, Ա.Մ.Մարջանյան, Ն.Ս.Օգանեզովա և ուրիշներ /Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ/, Երևան, Տնտեսագետ 2014: 6. Թ.Մովսիսյան, Հաշվապահական հաշվառում, Երևան, 2015 7. Կ.Զուրաբյան, Ն.Գասպարյան, Հաշվապահական հաշվառում: /Ուսումնական ձեռնարկ/, Երևան, ՀՈՒՄԿ, ԵՊՀ տպագրատուն, 2011 8. Ֆինանսական հաշվառման հիմունքներ, Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Երևան 2012 9. Кондраков Н.П. Бухгалтерский учет: Учебное пособие. 5-е изд., перераб и доп. Москва ИНФРА-М, 2008 10. M.Powers, B.Needles, S.Crosson, Financial and Managerial, Publisher: Cengage Learning; 10 edition (January 23)		

0201/B42	Կորպորատիվ ֆինանսների հիմունքներ	4 կրեդիտ
4 Ժամ/շաբ.	30/0/30	
5-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ ներդրումային պորտֆելների կազմման և կառավարման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել կապիտալ բյուջետավորման էությունը և մեթոդները: Դասընթացի խնդիրներն են. • բացատրել ֆինանսների դերը տնտեսավարող սուբյեկտների գործունեության մեջ, • ուսումնասիրել կորպորատիվ ֆինանսների կառավարման մեթոդները և գործիքները, • յուրացնել ընկերության ֆինանսական քաղաքականության հիմնական սկզբունքները:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր: 2. Գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը: 3. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ: 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 3. Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Ա9. մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, Բ3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Բ8. պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • նախադեպերի վերլուծություն • խմբային աշխատանք • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումները անց է կացվում բանավոր և գրավոր, գնահատվում են՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատում: Թեմա 2. Կապիտալի արժեք և կառուցվածք: Թեմա 3. Բիզնեսի գնահատում: Թեմա 4. Ռիսկ և եկամտաբերություն: Թեմա 5. Ֆինանսական վերլուծություն:
Հիմնական գրականության ցանկ 1. William R Lasher, Practical Financial Management, South Western, 2011 2. Брейли Р., Майерс С., Принципы корпоративных финансов, М.2011 3. Stephen A. Ross, Rndolpn W. Westerfield and Jaffrey F. Jaffe, Corporate Finance, 5 Edition, Irwin McGraw-Hill, 2012 4. Бригхем Ю., Финансовый менеджмент, П, 2009 5. Шарп У. “Инвестиции” Инра М, 2001 6. Боди Э, Мертон Р., “Финансы”, М, 2007

0201/B43	Ձեռնարկության էկոնոմիկա	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է դասընթացի նպատակն է ուսանողներին տալ խորացված և համակարգված գիտելիքներ ձեռնարկության էկոնոմիկայի հիմնական հասկացությունների, ժամանակակից պայմաններում ձեռնարկության գործառնական տեսական և գործնական հիմնախնդիրների և ձեռնարկության գործունեության արդյունավետ կառավարման մեթոդների մասին: Առանձին ուշադրություն է դարձվում ձեռնարկության գործունեությունը արտացոլող տնտեսական ցուցանիշների հաշվարկմանն ու վերլուծությանը: Դասընթացը ներառում է նաև ֆինանսական մենեջմենթի և ռիսկերի կառավարման որոշ հարցեր, ինչպես նաև դրանց հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները: Դասընթացի խնդիրներն են. • ծանոթացնել արտադրական և սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման և մոդելավորման գործընթացներին, արտադրական համակարգերի դինամիկ հաստատունության ապահովման մեթոդներին, արտադրական պրոցեսի կազմակերպման սկզբունքներին, • ծանոթացնել ֆիրմայի /ձեռնարկության/ ռեսուրսային ներուժի կառավարման մեթոդներին, ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման հիմունքներին, գործունեության պլանավորման և կառավարման մեթոդներին, ֆիրմայի ինովացիոն /նորամուծական/ գործունեության կառավարման հիմունքներին, • սովորեցնել ներդրումային նախագծերի կառավարման և դրանց տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդները, • ներկայացնել ֆիրմայի գործունեության արդյունավետության վերլուծության և գնահատման հիմունքները: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները: 2. Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ) կիրառելու տեսական գիտելիքները գործնականում: 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • սեմինար պարապմունքներ • գործնական առաջադրանքներ • կոնկրետ իրավիճակների վերլուծություն • նախադեպերի վերլուծություն:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. • 1-ին ընթացիկ քննություն. անցկացվում է գրավոր քննություն, որը ներառում է հարցատոմսի հարցերի ներկայացումը և գործնական առաջադրանքի կատարումը, • 2-րդ ընթացիկ քննություն. անցկացվում է գրավոր քննություն, որը ներառում է հարցատոմսի հարցերի ներկայացումը և գործնական առաջադրանքի կատարումը, • Եզրափակիչ քննություն. անցկացվում է բանավոր քննություն, որը ներառում է հարցատոմսի հարցերի բանավոր ներկայացումը և գործնական առաջադրանքի կատարումը:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ներածություն: Թեմա 2. Ձեռնարկությունը որպես շուկայական տնտեսության տնտեսվարող սուբյեկտ: Թեմա 3. Ձեռնարկատիրությունը: Թեմա 4. Ձեռնարկության իրավակազմակերպական ձևերը: Թեմա 5. Ձեռնարկատիրական կորպորատիվ ձևերը: Թեմա 6. Արտադրական պրոցեսի կազմակերպումը ձեռնարկությունում: Թեմա 7. Արտադրության տնտեսական և սոցիալական արդյունավետությունը: Թեմա 8. Ձեռնարկության ներդրումային գործունեությունը: Թեմա 9. Ձեռնարկությունում աշխատանքի նորմավորման հիմունքները: Թեմա 10. Ձեռնարկության հիմնական և շրջանառու միջոցները: Թեմա 11. Թեմա 12. Ձեռնարկության արտադրական հզորությունը և արտադրական ծրագիրը: Թեմա 13. Ձեռնարկության աշխատանքային ռեսուրսները: Թեմա 14. Արտադրական ծախսերը: Կալկյուլացիան: Ծախսերի նախահաշիվը: Թեմա 15. Ձեռնարկության շահույթը և շահութաբերությունը: Թեմա 16. Ձեռնարկության գնային քաղաքականությունը: Թեմա 17. Ձեռնարկության ֆինանսների կառավարումը:		
Հիմնական գրականության ցանկ 1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք: 2. Экономика фирмы: Учебник/ Под ред. Проф В.Я.Горфинкеля - 2-е изд., переаб. и доп.М.:ИНФРА-М, 2012 3. Финансовый менеджмент: теория и практика. Под ред. Стояновой Е.С. 5-е изд., перераб. и доп. - М.: 2010. 4. Экономика предприятия: Учебник для вузов/ Под ред. А.Е.Карлика, М.Л.Шухгальтер, 2-е изд., переработанное и дополненное. — СПб.: Питер, 2009. 5. Экономика фирмы: Учебник / Под общ.ред. Н.П.Ивашенко. Москва, 2007. 6. Е.Л.Кантор, Экономика предприятия. Санкт-Петербург, 2003 7. В.Я.Хрипач, Экономика предприятия, 2001		
0201/B44	Մակրոտնտեսագիտություն	6 կրեդիտ
6 ժամ/շաբ.	45/0/45	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողների գիտելիքները մակրոտնտեսագիտության ոլորտում, ուսանողներին ծանոթացնել հիմնական մակրոտնտեսական մոդելներին և մակրոտնտեսագիտության զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկություններին: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին ներկայացնել հիմնարար մակրոտնտեսա կան հասկացությունները և ցուցանիշները, • ուսանողներին ծանոթացնել հիմնական տնտեսական մոդելների և դրանց կիրառությունների հետ,		

• ուսանողներին զինել մակրոտնտեսական ուցանիշները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու կարողություններով, • ուսանողներին սովորեցնել օգտվել մասնագիտական գրականությունից և վիճակագրական տվյալների աղբյուրներից:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Մեկնաբանելու մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները: 2. Վերլուծելու հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա փոխկապվածությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերլուծելու տիպային տնտեսա-մաթեմատիկական իրավիճակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում: 2. Կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք: 3. Մտածելու և արտահայտվելու ստեղծագործաբար:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա8. մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ5. գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը, Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • թեստային վարժություններ և խնդիրների լուծում, • բանավեճեր, դերային խաղեր և իրավիճակային սցենարների քննարկումներ, • հետազոտական բնույթի թիմային աշխատանքներ, • տնային առաջադրանքներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. • 1-ին ընթացիկ քննություն [գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, 5 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5]. • 2-րդ ընթացիկ քննություն [գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, 5 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5]. • Եզրափակիչ քննություն [բանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, 10 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5].
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ազգային հաշիվների համակարգ: Թեմա 2. Տնտեսությունը երկարաժամկետ հատվածում («դասական» տնտեսություն): Թեմա 3. Փող և ինֆլյացիա: Թեմա 4. Բաց տնտեսություն: Թեմա 5. Տնտեսությունը կարճաժամկետ հատվածում: Գործարար ցիկլեր: Թեմա 6. Համախառն առաջարկի և համախառն պահանջարկի դինամիկ մոդել: Թեմա 7. Սպառում: Թեմա 8. Ներդրումներ: Թեմա 9. Փողի պահանջարկը և առաջարկը: Թեմա 10. Գործազրկություն: Թեմա 11. Հարկաբյուջետային քաղաքականություն: Թեմա 12. Դրամավարկային տեսություն: Թեմա 13. Բաց տնտեսություն: Թեմա 14. Սղոյի տնտեսական աճի մոդելը: Թեմա 15. Տնտեսական աճի Ռֆանսեյի մոդելը:
Հիմնական գրականության ցանկ 1. Ն.Մենքյու, Մակրոտնտեսագիտություն, Երևան, «Հայաստան» 1997 2. Զ.Սաքս, Ֆ.Լարրեյն, Մակրոտնտեսագիտությունը գլոբալ տնտեսությունում, Երևան, «Տնտեսագետ», 2002 3. Л.Тарасевич, П.Гребенников, А.Леусский, Макроэкономика, Санкт-Петербург, 2003

4. Шарас Н.Л, Туманова Е.А., Макроэкономика-2, М.: изд-во МГУ, 2006
5. Barro R., Macroeconomics: A Modern Approach, South Western College Pub., 2007
6. D.Romer, Advanced Macroeconomics, McGraw-Hill, 2006

0201/B46	Բանկային գործ	6 կրեդիտ
6 ժամ/շաբ.	45/0/45	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ձևավորել բանկային գործունեության հիմունքների, բանկերի գործունեության կարգավորման օրենսդրական դաշտի, բանկերի կողմից իրականացվող գործառնությունների և կենտրոնական բանկի խնդիրների վերաբերյալ գիտելիքներ: Դասընթացի խնդիրներն են. • բացատրել բանկային գործունեության հետ կապված հասկացությունները, • ծանոթացնել բանկային գործունեությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթերին, • ներկայացնել ժամանակակից բանկային գործի տեսության և պրակտիկայի հիմունքները, • ձևավորել տիպիկ բանկային իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու ունակություն:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆինանսական համակարգը, բանկային ոլորտը: 2. Մեկնաբանելու ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությանը, ինչպես նաև ՀՀ-ում ֆինանսական կառույցների՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային և ավանդային գործառնությունները: 3. Բացատրելու Կենտրոնական Բանկի՝ որպես ֆինանսական համակարգի կայունության և գների կայունության ապահովման հիմնական պատասխանատուի գործառնությունները և դերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու բանկերի դերն ու նշանակությունը տնտեսության կայացման և զարգացման գործում: 2. Վերլուծելու կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականությունը և բնութագրելու ֆինանսական համակարգի և գնաճի կայունությունը բնորոշող ցուցանիշները: 3. Ինքնուրույն իրականացնելու առևտրային բանկի տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների գնահատում և վերլուծություն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Արագորեն և հմտորեն կողմնորոշվելու ֆինանսական շուկայում՝ հստակ պատկերացում կազմելով բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող ամենատարբեր ծառայությունների մասին: 2. Գործելու վերահսկող մարմնի՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանվող «խաղի կանոններով», այսինքն այն նորմատիվային դաշտով, որով և առաջնորդվում են ՀՀ ֆինանսական կազմակերպությունները:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□ Ա3. ներկայացնելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները, Բ1. դասակարգելու ռիսկերը և կայացնելու ֆինանսական որոշումներ, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ6. մշակելու և գործնականում իրականացնելու բանկային հատվածի վարկային և ակտիվային այլ գործառնությունները, Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • սեմինարներ, քննարկումներ և բանավեճեր,		

• խմբային աշխատանքներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Բանկերի ծագումը և բանկային համակարգի ձևավորումը: Թեմա 2. Բանկային գործունեության առանձնահատկությունները և բանկային համակարգի ձևավորումը ՀՀ-ում: Թեմա 3. Կենտրոնական բանկերի դերը և գործառնությունները: Թեմա 4. Առևտրային բանկերը և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունները: Թեմա 5. Առևտրային բանկերի գործառնությունները: Թեմա 6. Բանկային գործունեության վերահսկողությունը և կարգավորումը: Թեմա 7. Միջազգային բանկային գործառնություններ:
Հիմնական գրականության ցանկ 1. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկեր, Լ.Բադանյան, Եր: 2010 2. Բ.Ասատրյան, «Բանկային գործ», Եր. 2013 3. «Экономическая теория денег, банковского дела и финансовых рынков», Ф. Мишкин, 1999 4. «Банки и банковские операции», М. Лаврушин, 2016 5. «Банковское дело» , М.Лаврушин, М. 2009 6. «Деньги, кредит, банки», М.Владимирова, А.Козлов, М. 2006 7. www.cba.am 8. www.imf.org

0201/B47	Հարկային համակարգ	4 կրեդիտ
4 Ժամ/շաբ.	30/30/0	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացինպատասխան է ծանոթացնել Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի առանձնահատկություններին և դրա օրենսդրական ապահովմանն առնչվող հարցերին: Դասընթացի խնդիրներն են. • ներկայացնել ՀՀ հարկային համակարգի իրավական հիմքը, • յուրացնել հարկերի հաշվարկման ժամանակակից մեթոդները, • սովորեցնել կազմել հարկային հաշվետվություններ, • ձևավորել հարկային հաշվառման և պլանավորման հմտություններ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները : բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները: 2. Պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 2. Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□ Ա7.Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ2.պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից,		

Բ5. գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Բ8. պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • նախադեպերի վերլուծություն, • խմբային աշխատանք, • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Անցկացվում է 2 ընթացիկ քննություն (յուրաքանչյուրը՝ 5 միավոր) և եզրափակիչ քննություն (10 միավոր): Ընթացիկ քննության հարցատոմսը բաղկացած է 3 հարցից, հետևյալ միավորներով՝ 2,2,1: Եզրափակիչ քննության հարցատոմսը բաղկացած է 3 հարցից, հետևյալ միավորներով՝ 4,3,3:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հարկերի տնտեսական բովանդակությունը: Թեմա 2. ՀՀ հարկային համակարգը: Թեմա 3. ՀՀ պետական հարկերը: Թեմա 4. ՀՀ տեղական հարկերը: Թեմա 5. Հարկերին փոխարինող հարկեր: Թեմա 6. Հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում:
Հիմնական գրականության ցանկ 1. Հարությունյան Վ., Հարկեր և հարկազանձում, Երևան, 2010թ 2. Перов А., Налоги и налогообложение. М., 2008г.

0201/B49	Ռիսկերի կառավարում և ապահովագրություն	5 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
7-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ապահովագրության տեսական ու իրավական հիմունքների, կառուցակարգային խնդիրների, ինչպես նաև ապահովագրական ծառայությունների գործնական կիրառման և առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են. • ներկայացնել տնտեսական ռիսկերի էությունը և դասակարգումը, • բացահայտել ռիսկերի առաջացման պատճառները, • ներկայացնել ֆինանսական ռիսկերի առաջացման ոլորտները, • ձևավորել տարբեր տեսակի ռիսկերի ռազմավարական կառավարման հմտություններ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Մեկնաբանելու ոչ բանկային ֆինանսական ոլորտին բնորոշ առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Դասակարգելու ռիսկերը և կայացնելու ֆինանսական որոշումներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 2. Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Բ1. դասակարգելու ռիսկերը և կայացնել ֆինանսական որոշումներ, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր,		

օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • նախադեպերի վերլուծություն, • խմբային աշխատանք, • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. • անցկացվում է 2 ընթացիկ քննություն (յուրաքանչյուրը՝ 5 միավոր) և եզրափակիչ քննություն (10 միավոր): Ընթացիկ քննության հարցատոմսը բաղկացած է 3 հարցից, հետևյալ միավորներով՝ 2,2,1: • եզրափակիչ քննության հարցատոմսը բաղկացած է 3 հարցից, հետևյալ միավորներով՝ 4,3,3:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ռիսկ հասկացությունը: Թեմա 2. Ռիսկերի կառավարման փուլերը: Թեմա 3. Ռիսկի կառավարման մոդելներում կիրառվող դասական կառուցակարգերը: Թեմա 4. Ապահովագրություն: Թեմա 5. Ապահովագրության իրավական սկզբունքները: Թեմա 6. Ապահովագրության սկզբունքները ՀՀ օրենսդրությունում: Թեմա 7. Ապահովագրության գործարքի կողմերը: Թեմա 8. Ապահովագրության պայմանագրի առանձնահատկությունները և պարտադիր պայմանները: Թեմա 9. Անդերայթինգ: Թեմա 10. Ապահովագրության գնագոյացումը: Թեմա 11. Ապահովագրական պատահարը և հատուցումը: Թեմա 12. Ապահովագրական հատուցումից ազատման և հատուցումը մերժելու հիմքերը:
Հիմնական գրականության ցանկ 1. Քառյան Ա.Վ. Ապահովագրության հիմունքներ Ուս. ձեռնարկ/ Ա. Վ. Քառյան. - Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2011, էջ - 144 2. Страхование: Учебник/ Под ред. Т.А. Федеровой. - 2-е изд., перераб. и доп. – М.: Экономистъ, 2004. – 875 с. 3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 54-րդ գլուխ “Ապահովագրություն” 4. Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենքը

0201/B48	Մենեջմենթ	5 կրեդիտ
5 ժամ/շաբ.	45/0/30	
7-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մենեջմենթի սկզբունքներին, մենեջերների ֆունկցիաներին, էթիկային, ռազմավարական պլանավորմանը, հաղորդակցման հմտություններին, աշխատողների մոտիվացիայի տեսություններին, սկզբունքներին, կիրառման հմտություններին, թիմային աշխատանքին, կիրառման անհրաժեշտությանը, կոնֆլիկտային իրավիճակների կառավարմանը, լիդերության տեսություններին և ժամանակակից ասպեկտներին: Դասընթացի խնդիրներն են. • ուսանողներին ծանոթացնել կառավարման հիմնարար տեսական դրույթներին և ժամանակակից կառավարչական մտքի զարգացման հիմնական ուղղություններին, • խթանել ուսանողների հետաքրքրությունը կառավարման պրակտիկ գործունեության նկատմամբ, • նպաստել ապագա կառավարչի մշակույթի և մտածողության ձևավորմանը, • բացահայտել կառավարման մարդաբանական բնույթը, • պազա կառավարիչներին /մենեջերներին/ զինել կառավարման տեխնոլոգիաներով, մեթոդներով, ձևերով, միջոցներով և հնարներով աշխատելու կարողություններով: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն		

1. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները: 2. Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ) կիրառելու տեսական գիտելիքները գործնականում: 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Ա7. բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ):		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • քննարկումներ, • նախագծերի մեթոդ, • խճանկարի մեթոդ, • դերային խաղերի մեթոդ, • լսարանային ցուցադրություններ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. • ընթացիկ քննություններ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: • եզրափակիչ քննություն Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Մենեջմենթի տեսության ներածություն: Թեմա 2. Մենեջմենթի զարգացման փուլերը: Թեմա 3. Ժամանակակից մենեջմենթի հիմնական մոտեցումները. կառուցվածքային տարրերը, նպատակները, առանձնահատուկ գծերը: Թեմա 4. Կազմակերպության միջավայրը և ենթակառուցվածքը: Թեմա 5. Մենեջերի գործունեության ուղղությունները կազմակերպությունում: Թեմա 6. Մենեջմենթի գործառույթները և կապակցող գործընթացները կազմակերպությունում:		
Հիմնական գրականության ցանկ 1. Дафт Р.Л., Менеджмент, Питер , 2015 2. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, М., 2015 3. Роббинз С.П., Коутер М., Менеджмент, М., 2007 4. Томсон А., Стрикленд А. Стратегический менеджмент, М., 2006 5. Веснин В.Р., “Менеджмент”; Москва: Проспект, 2011, 6. Пивоваров С.Э., Максимцев Н.А., “Сравнительный менеджмент”-СПб. 2008, 7. Սուվարյան Յու. Մ., <Մենեջմենթ> Երևան 2002թ.		

0201/B50	Մաքսային գործ	5 կրեդիտ
5 ժամ/շաբ.	45/30/0	
7-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ամփոփ ձևով ներկայացնել Մաքսային հսկողության էությունը, Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելուց հետո ՀՀ-ում կիրառվող մաքսային ընթացակարգերի, մաքսային արժեքի որոշման և մաքսային վճարների գանձման հիմնական առանձնահատկությունները: Դասընթացի խնդիրներն են. • ուսումնասիրել հի մաքսային քաղաքականությունը, • բացատրել մաքսային ու պետության ներքին և արտաքին քաղաքականության կապը, • ներկայացնել մաքսային մարմինների կառուցվածքը և դրանց կառավարման մակարդակները, • ծանոթացնել մաքսային գործառնությունների առանձնահատկություններին:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ճանաչելու մաքսային գործունեության և վարչարարության հիմնարար սկզբունքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ: 2. Պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ): 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարոյությունները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա6. Ճանաչելու մաքսային գործունեության և վարչարարության հիմնարար սկզբունքները, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ5. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ):
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • նախադեպերի վերլուծություն, • խմբային աշխատանք, • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Անցկացվում է եզրափակիչ քննություն: Հարցատոմսը բաղկացած է 3 հարցից, հետևյալ միավորներով՝ 7,7,6:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. ՀՀ անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը և Եվրասիական տնտեսական միության կառուցվածքը: Թեմա 2. Մաքսային հսկողության էությունը: Թեմա 3. Մաքսային ընթացակարգերը և դրանց տեսակները: Թեմա 4. Մաքսային արժեքի հասկացությունը և որոշման մեթոդները: Թեմա 5. Մաքսային վճարներ:
Հիմնական գրականության ցանկ. 1. А.В.Толкушкин, Таможенное дело, М 2009 2. О.В.Молчанова, Таможенное дело, М 2005 3. С.В.Халипов, Таможенное право, М 2004 4. Մաքսային օրենսդրության կիրառման հարցերի պարզեցված ուղեցույց 3, 2001 5. Е.Н.Ковалева, Таможенные процедуры, М 2005 6. В.М.Назаренко, Таможенное обслуживание внешнеэкономической деятельности, М 2001 7. Հ.Լ.Ֆարմանյան, Մաքսային վարչարարության 300 հարց ու պատասխան, 2013

0201/B51	Ֆինանսների կառավարում	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
7-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ներկայացնել ֆինանսների տնօրինման հիմնարար տեսական մոտեցումները, ինչպես նաև գործնականում ցույց տալ տարբեր իրավիճակներում ֆինանսական որոշումների կայացման և կիրառման ձևերը: Դասընթացի խնդիրներն են. • ուսումնասիրել ֆինանսական ռեսուրսների ձևավորման աղբյուրները, • յուրացնել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմունքները, • յուրացնել դրամական հոսքերի օպտիմալացման մեթոդները, • ձևավորել կազմակերպության ֆինանսական կայունության և վճարունակության հիմնավորման հմտություն:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները: 2. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը: 2. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը: 2. Բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□ Ա1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Բ3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Բ4. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Գ2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • նախադեպերի վերլուծություն, • խմբային աշխատանք, • անհատական աշխատանք:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումները անց է կացվում բանավոր և գրավոր, գնահատվում են՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ֆինանսների կառավարման հիմունքներ: Թեմա 2. Գործառնական և դրամական հոսքերի ցիկլերը: Թեմա 3. Կանխիկի կառավարում: Թեմա 4. Պաշարների և դեբիտորական պարտքերի կառավարում: Թեմա 5. Կարճաժամկետ պարտավորությունների կառավարում: Թեմա 6. Սեփական կապիտալի կառավարում: Թեմա 7. Երկարաժամկետ պարտավորությունների կառավարում: Թեմա 8. Ֆինանսական պլանավորում:		
Հիմնական գրականության ցանկ 1. William R Lasher, Practical Financial Management, South Western, 2011 2. Колб Р., Родригес Р. Финансовый менеджмент. П. 2001		

3. Stephen A. Ross, Rndolpn W.Westerfield and Jaffrey F. Jaffe, Corporate Finance, 5 Edition, Irwin McGraw-Hill, 2012
4. Бригхем Ю. Финансовый менеджмент, П, 2009
5. Шарп У. “Инвестиции» Инра М, 2001
6. Боди Э, Мертон Р. “Финансы”, М, 2007
7. Стоянова Е Финансовый менеджмент, П, 2010

0201/B52	Տնտեսական գործունեության վերլուծություն	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	15/15/0	
7-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում տնտեսական գործունեության վերլուծության կարևորության, տնտեսական գործունեության վերլուծության եղանակների, ինչպես նաև վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ու մշակման մասին: Անհրաժեշտ է ուսանողներին ծանոթացնել կազմակերպության ֆինանսական դրության, արդյունքի, սնանկացման և ռիսկի գնահատման մեթոդիկային, ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ: Դասընթացի խնդիրներն են. • մեկնաբանել դասընթացի առարկան, մեթոդը, դասակարգել արտադրության արդյունավետության բարձրացման պահուստները, • բացատրել ֆինանսական, կառավարչական վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվական բազան, եղանակները, անհրաժեշտ ցուցանիշները, • ուսուցանել օգտվել հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելիս, • գինել փաստաթղթերի հետ աշխատելու, գործարար ակտիվության ցուցանիշները հաշվարկելու, տգվ խնդիրներ լուծելու, գործունային վերլուծություններ կատարելու կարողություններով: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ընտրելու անհրաժեշտ տնտեսական ինֆորմացիան, կազմելու վերլուծական աղյուսակներ: 2. Բացահայտելու ցուցանիշների փոփոխությունները նախորդ տարիների նկատմամբ: 3. Բացահայտելու արտադրության արդյունավետության բարձրացման հնարավոր ռեզերվները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կատարելու տրված տեղեկատվության հիման վրա ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների, պարտավորությունների օգտագործման արդյունավետության վերլուծություն: 2. Գնահատելու հաշվետվության տվյալներով կազմակերպության ֆինանսական դրությունը, ֆինանսական արդյունքը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում, շփվելու մասնագիտական լեզվով: 2. Անհայտ իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու, կատարելու առաջարկություններ: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի □ Ա9.մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, Բ2.պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու,		

վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր • խմբային աշխատանքներ • ռեֆերատներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնադրությունների ձևավորումը ստուգելու համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումները անց է կացվում բանավոր և գրավոր, գնահատվում են՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տնտեսական գործունեության վերլուծության կարևորությունը արտադրության կառավարման համակարգում: Թեմա 2. «Տնտեսական գործունեության վերլուծության» առարկան, խնդիրները, մեթոդը և տեսակները: Վերլուծության կազմակերպումը և տեղեկատվական բազան: Թեմա 3. Տնտեսական գործունեության վերլուծության եղանակները: Թեմա 4. Ոչ ընթացիկ ակտիվների վերլուծություն: Թեմա 5. Ընթացիկ ակտիվների վերլուծություն: Թեմա 6. Եկամուտների և ծախսերի վերլուծություն: Թեմա 7. Կանոնադրական կապիտալի վերլուծություն: Թեմա 8. Ֆինանսական արդյունքների վերլուծություն: Թեմա 9. Ֆինանսական պարտավորությունների վերլուծություն: Թեմա 10. Կրեդիտորական պարտքի վերլուծություն: Թեմա 11. Ֆինանսական դրության վերլուծություն:
Հիմնական գրականության ցանկ 1. ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին», 2002թ. 2. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ, 2012 3. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, 2012: 4. ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, 2016թ. 5. ՀՀ Հարկային օրենսգիրք 2016թ. 6. Ա.Սարգսյան, Կ.Առաքելյան, Տնտեսական գործունեության վերլուծություն. Երևան 2005 7. Ա.Անդրեյան, Տնտեսական գործունեության վերլուծություն. Երևան 2003, 8. Ա.Բայադյան, Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը. Երևան 2002

0201/B53	Բանկային գործունեության կարգավորում	5 կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0/30	
7-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	
Դասընթացի նպատակն է ներկայացնել բանկերի գործունեության կարգավորման հիմունքները, որի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն կդարձվի ՀՀ բանկերի գործունեությունը կարգավորող իրավական և տնտեսական նորմատիվներին, ինչպես նաև կենտրոնական բանկի դերին, որպես կարգավորող և վերահսկող մարմին:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության ոլորտին առնչվող խնդիրները: 2. Մեկնաբանելու ՀՀ բանկային համակարգի կայունության, հուսալիության և բնականոն գործունեության ապահովմանն ուղղված յնստիտուցիոնալ մոտեցումները և խնդիրները: 3. Բացատրելու կենտրոնական բանկի՝ որպես ֆինանսական համակարգի կայունության ապահովման խնդիրների հիմնական պատասխանատուի գործառնությունները և դերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ներկայացնելու բանկերի գործունեության կարգավորման սկզբունքները: 2. Ներկայացնելու ՀՀ բանկային գործունեությունը կարգավորող իրավական և տնտեսական նորմատիվները և նրանց կարգավորման դաշտը:		

3. Գնահատելու բանկերի դերն ու նշանակությունը տնտեսության կայացման և զարգացման գործում: 4. Կարողանալու ինքնուրույն իրականացնելու առևտրային բանկի տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների գնահատում և վերլուծություն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. գնահատելու բանկերի տնտեսական գործունեությունը, ֆինանսական համակարգի կայունությանը միտված քայլերի ընթացքը և բանկային գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմանների ստեղծման հնարավորությունը: 2. Տիրապետելու վերահսկող մարմնի՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանվող նորմատիվային դաշտին, որով և առաջնորդվում են ՀՀ ֆինանսական կազմակերպությունները:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□ Ա3. ներկայացնելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները, Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ5. գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները, Բ6. մշակելու և գործնականում իրականացնելու բանկային հատվածի վարկային և ակտիվային այլ գործառույթները, Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ):
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր, • խմբային աշխատանքներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության նպատակը: Թեմա 2. Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները ՀՀ –ում: Թեմա 3. Բանկերի վերահսկողության իրավական և մեթոդական հիմքերը: Թեմա 4. Բանկերի վերահսկողության համակարգի ձևավորման և զարգացման փուլերը ՀՀ–ում: Թեմա 5. Բանկերի նկատմամբ կիրառվող ներգործության միջոցները: Թեմա 6. Բանկային ռիսկերի դասակարգումը և տեսակները: Թեմա 7. Բանկային ռիսկերի գնահատման հիմնական եղանակները:
Հիմնական գրականության ցանկ 1. ՀՀ օրենքը Բանկերի և բանկային գործունեության մասին 2. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» Լ.Բադալյան, Եր: 2010 3. «Բանկային գործ» Բ.Ասատրյան, Երևան. 2013 4. «Բանկային գործի հիմունքներ» Վ.Բաբայան Եր. 2003 5. «Экономическая теория денег, банковского дела и финансовых рынков» Ф. Мишкин, 1999 6. «Банки и банковские операции» М.Лаврушин, 2016 7. «Банковское дело» М.Лаврушин, М. 2009 8. «Деньги, кредит, банки» М.Владимирова, А.Козлов, М. 2006 9. www.cba.am 10. www.imf.org

0201 / B54	Գործավարություն օտար լեզվով /անգլերեն/	4 կրեդիտ
4 ժամ/ շաբ.	0/60/0	

3-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման
Դասընթացի նպատակն է զարգացնել անգլերենի հաղորդակցական հմտությունները՝ հիմք ընդունելով գործարար ոլորտում կիրառվող խոսքային կաղապարները, ձևավորել անհրաժեշտ կարողություններ խոսքի բոլոր դրսևորումներում (ընթերցում, ունկնդրում, գրավոր և բանավոր խոսք)՝ խորացնելով տնտեսագիտության հիմնարար տերմինապաշարի իմացությունը, ներկայացնել գործարարական գրագրության ռազմավարությունը և սկզբունքները: Դասընթացի խնդիրներն են. • ուսումնասիրել անգլերեն լեզվի քերականական առանձնահատկությունները, • բացատրել գործավարության սկզբունքները, փաստաթղթերի ձևակերպման կանոնները, • զարգացնել կոմունիկացիայի միջոցների կիրառման հմտությունները:	
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու տնտեսագիտության և գործարարության ոլորտում կիրառվող մասնագիտական հենքային բառապաշարը և քերականական կաղապարները: 2. Ներկայացնելու մասնագիտական բնագիր նյութը ընթերցելով և ունկնդրելով ընկալելու և մեկնաբանելու սկզբունքները: 3. Մեկնաբանելու մասնագիտական նյութը և տարորոշելու ոճային առանձնահատկությունները պաշտոնական և ոչ պաշտոնական գրագրության համատեքստում: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերարտադրելու և մեկնաբանելու մասնագիտական նյութի հիմնական բովանդակությունը: 2. Քննարկելու տնտեսագիտության և գործարարության թեմաներով հարցեր՝ հիմնավորելով սեփական տեսակետը: 3. Ձևակերպելու գործարար նամակներ՝ կիրառելով համապատասխան բառապաշարը, քերականական կաղապարները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության զանազան աղբյուրներից՝ մասնագիտական տպագիր և էլեկտրոնային նյութեր: 2. Կազմելու տարատեսակ գործնական փաստաթղթեր՝ ինքնակենսագրություն (resume/cv), կից նամակ, գրավոր հաշվետվություն, բանավոր զեկույցներ, առևտրային և բանակցային նամակներ: 3. Արդյունավետ կիրառելու համակարգչային հմտությունները:	
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ F2.պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվել նորմատիվաիրավական փաստաթղթերից, F8.պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ, Գ1.օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ3.բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ6.աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:	
Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները. • գործնական պարապմունք, • անհատական և խմբային աշխատանք, • ինքնուրույն աշխատանք, • հեռահաղորդակցական աշխատանք:	
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Դասընթացի շրջանակներում ուսանողնորը կհանձնեն եզրափակիչ ստուգում՝ 20 միավոր: Ստուգման համար ուսանողները պետք է ներկայացնեն ուսանողի անհատական պորտֆոլիո, որում ամփոփված կլինի առնվազն՝ 1 ինքնակենսագրական, 1 մոտիվացիոն նամակ, 1 գործնական նամակ, 1 զեկույց, 1 ներդրումների նախագիծ, 1 դիմում-առաջարկ, 1 հայտարարություն, 1 էլ-նամակ:	

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Գործարարական անգլերենի լեզվառճային առանձնահատկությունները: Թեմա 2. Գործարար բանավոր և գրավոր հաղորդակցության յուրահատկությունները: Թեմա 3. Գործարար գրագրության հիմնական սկզբունքները և տեսակները: Հիմնական գրականության ցանկ 1. Vartapetian Z., Basics of Business Letter Writing in English. Yerevan: Yerevan State University Press, 2012 2. Cotton D., Falvey D., Kent S., Market Leader, Upper Intermediate Business English Coursebook, 2008. 3. Emmerson P., Business Grammar Builder, Pearson Education Limited, 2010. 4. Chapman R., English for Emails, Oxford University Press, 2012. 5. Ashley A., Commercial Correspondence. Oxford University Press, 2010. 6. Maier-Fairclough J., Butzphal G., Career Express, Business English C1, Garnet Education, 2013.

0201/B54	Գործավարություն օտար լեզվով /ռուսերեն/	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
3-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է խորացված ուսումնասիրել մասնագիտական բառապաշարը: Ձևաորել կառավարչական փաստաթղթերի տարբեր ձևերի հետ աշխատելու հմտություն: Զարգացնել լեզվական հաղորդակցական կարողությունները: Դասընթացի խնդիրները. • ուսումնասիրել ռուսաց լեզվի քերականական առանձնահատկությունները, • բացատրել գործավարության սկզբունքները, փաստաթղթերի ձևակերպման կանոնները, • զարգացնել կոմունիկացիայի միջոցների կիրառման հմտությունները: Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու մասնագիտական տեքստերը թարգմանելու համար ռուսաց լեզվի քերականության առանձնահատկությունները: 2. Բացատրելու փաստաթղթերի կազմման կանոնները: 3. Վերլուծելու և բացատրելու գործնական էթիկայի կանոնները և առանձնահատկությունները տարբեր երկրներում : բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կազմելու գործնական ոլորտում անհրաժեշտ փաստաթղթերը: 2. Օգտագործելու գործավարության կանոնները կառավարման տարբեր օղակներում: 3. Վարելու գործավարություն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Հիշտ օգտագործելու տեղեկատվության փոխանցման և ստացման միջոցները: 2. Վարելու բանակցություններ: 3. Հավաքագրելու, վերլուծելու, պահպանելու տեղեկատվությանը: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ8. պատրաստելու և ներկայացնելու տարատեսակ հաշվետվություններ, Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ, Գ6. աշխատելու խմբում /թիմում/, գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպելու խնդիրներ և լուծելու:. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.		

• նյութի ներկայացումը սլայդների միջոցով, • գործնական աշխատանքներ, • ինքնուրույն աշխատանքներ (զեկույց, ռեֆերատ, փաստաթղթերի կազմում), • անհատական և խմբային աշխատանքներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված է եզրափակիչ ստուգում՝ 20 միավոր, որը ձևավորվում է ընթացիկ ինքնուրույն և խմբային աշխատանքների արդյունքներով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Քերականություն, մասնագիտական բառապաշար և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում: Գործնական էթիկա: Թեմա 2. Փաստաթղթերի ձևակերպման կանոնների և գործավարության կազմակերպումը: Թեմա 3. Կառավարման փաստաթղթային ապահովում:
Հիմնական գրականության ցանկ 1. М.И.Кирсанова, Ю.М.Аксенов, Курс делопроизводства, Москва-Новосибирск, 2005 2. М.И.Басаков, Делопроеизводство и корреспонденция, Москва 2003 3. В.И.Андреева, Делопроеизводство. Организация и ведение, Москва 2008

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0201/B55	Ֆինանսական իրավունք	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
5-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ֆինանսական իրավունքի առանցքային ինստիտուտների բովանդակությանը, ֆինանսական իրավունքի հիմնարար հասկացություններին, գործող ֆինանսական օրենսդրության հիմնական դրույթներին: Դասընթացի խնդիրներն են. • ուսումնասիրել ֆրանսերեն լեզվի քերականական առանձնահատկությունները, • բացատրել գործավարության սկզբունքները, փաստաթղթերի ձևակերպման կանոնները, • զարգացնել կոմունիկացիայի միջոցների կիրառման հմտությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր: 2. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածների կառավարման և գնահատման մեթոդները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ): 2. Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Բ2. պատրաստելու համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ նյութեր, օգտվելու նորմատիվաիրավական փաստաթղթերից, Բ3. գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, Բ4. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները, Բ5. գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները:		

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • նախադեպերի վերլուծություն, • խմբային աշխատանք, • անհատական աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված է եզրափակիչ ստուգում 20 միավոր առավելագույն արժեքով:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Պետության ֆինանսական գործունեությունը: Թեմա 2. ՀՀ ֆինանսական իրավունքի առարկան և համակարգը: Թեմա 3. Ֆինանսական իրավունքի գիտությունը: Թեմա 4. Ֆինանսական նորմեր և հարաբերությունները: Թեմա 5. Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորումը ՀՀ-ում: Թեմա 6. ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների կառուցվածքը: Թեմա 7. Հարկային իրավունքի հիմունքներ: Թեմա 8. Շուկայի արժույթային գործունեությունների իրավական կարգավորումը:
Հիմնական գրականության ցանկ 1. Գործարարական իրավունք, Տ. Բարսեղյան, 2017 թ. 2. Предпринимательское право, Волтерс, Крувелс, Москва 2014г. 3. Предпринимательское право, Белых, Москва, 2013 г.

0201/B55	Կառավարչական հաշվառում	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
5-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է ներկայացնել ձեռնարկությունների ծախսերի կառավարման և բյուջետավորման ժամանակակից փորձը, ծանոթացնել ձեռնարկության արդյունավետ կառավարման համար հաշվառման ժամանակակից համակարգի ձևավորման հիմնական սկզբունքներին: Ապահովել գիտելիքներ հետագա դասընթացների ուսումնասիրման համար Դասընթացի խնդիրներն են. • բացատրել կազմակերպության ծախսերի և ծախսումների առանձնահատկությունները, • մեկնաբանել կազմակերպության ծախսերի և ծախսումների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը, արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիայի մեթոդները, • ուսուցանել օգտվել փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելիս, • զինել կառավարչական հաշվառման փաստաթղթեր լրացնելու և ստուգելու, ծախս-ծավալ-շահույթ վերլուծություն կատարելու, անուղղակի ծախսերը արտադրանքի ինքնարժեքին վերագրելու կարողություններով, • ապահովել գիտելիքներ հետագա դասընթացների հետ տրամաբանական կապ ստեղծելու համար:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Դասակարգելու և մեկնաբանելու ծախսերը և ծախսումները, արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիայի մեթոդները: 2. Կատարելու ծախսումների դասակարգում և ինքնարժեքի կալկուլյացիա: 3. Թվարկելու ներքին հաշվառման խնդիրները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կատարելու ծախս-ծավալ-շահույթ վերլուծություն: 2. Մեկնաբանելու անուղղակի ծախսերը արտադրանքի ինքնարժեքի վերագրման մեթոդները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կատարելու վերլուծություն և կայացնելու կառավարչական որոշումներ ստացված տեղեկատվության հիման վրա:		

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Ա7.բացատրելու տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները, Բ7.կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, աշխատելու STATA, EView-s, հաշվապահական ծրագրերով /ՀՕ/, Բ8.պատրաստել և ներկայացնել տարատեսակ հաշվետվություններ, Գ2.որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակել, վերլուծել և մեկնաբանել տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • դասախոսություններ, • սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր, • խմբային աշխատանքներ, • ռեֆերատներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված է եզրափակիչ ստուգում 20 միավոր առավելագույն արժեքով:		
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Կառավարչական հաշվառման դերը, նշանակությունը, առանձնահատկությունները: Թեմա 2. Ծախսերի դասակարգումը և վարքագիծը: Թեմա 3. Ծախսերի գնահատումը: Թեմա 4. Նյութական ծախսերի հաշվառումը: Թեմա 5. Աշխատանքային ծախսերի հաշվառումը: Թեմա 6. Ծախսերի հաշվառման պատվերային մեթոդը: Թեմա 7. Ծախսերի հաշվառման փուլային մեթոդը: Թեմա 8. Արտադրական վերադիր ծախսերի հաշվառումը: Թեմա 9. Ծախսերի հաշվառման սահմանային մեթոդը: Թեմա 10. Ծախսածածկման վերլուծությունը: Թեմա 11. Ծախսերի հաշվառման նորմատիվային մեթոդը: Թեմա 12. Բյուջետային պլանավորումը և վերահսկողությունը: Թեմա 13. Գնագոյացումը և որոշումների կայացումը: Թեմա 14. Ինքնարժեքի հաշվառման ABC մեթոդը:		
Հիմնական գրականության ցանկ 1. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, 2002թ. 2. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան եվ դրա կիրառման հրահանգ 2012 3. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ, 2012: 4. Ա.Զ.Սարգսյան, Մ.Բ.Պողոսյան, Կառավարչական հաշվառում : Ուսումնական ձեռնարկ բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար. Երևան 2009 5. Մ.Գալստյան, Ինքնարժեքի հաշվառում Երևան 2003 6. Ա.Գ.Ճուղուրյան. Կառավարչական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար Երևան 2005		

0201/Բ56	Բիզնեսի կազմակերպում	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0.	
5-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	
Դասընթացի նպատակն է տրամադրել բիզնեսի էության և դրսևորման առանձնահատկությունների, ինչպես նաև բիզնեսի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքներ և իմացություն: Դասընթացի խնդիրները՝ • ուսուցանել բիզնեսի տեսամեթոդական հենքերը, ինչպես նաև բիզնեսի կազմակերպման ու կառավարման տեսագործական հիմունքներն ու բիզնեսի վարման հմտությունները, • տրամադրել բիզնեսի վերլուծական, բիզնես պլանների մշակման և այլ կարևոր կարողություններ, որոնք կարող են օգտակար լինել շրջանավարտի մասնագիտական կարիերայի ընթացքում:		

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բացատրել տնտեսագիտական տարբեր խնդիրների և երևույթների ձևավորման, կառավարման մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու ընտրված տնտեսական քաղաքականությունները: 2. Կատարելու գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ) կիրառելու տեսական գիտելիքները գործնականում: 2. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ Բ8. պատրաստել և ներկայացնել տարատեսակ հաշվետվություններ, Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), Գ7. ճիշտ գնահատել սեփական ունակությունները և որոշում կայացնել հետագա ուսումնառության, աշխատանքի կատարելագործման համար:		
